ԵՐԵՎԱՆԻ, ԱՐԱՐԱՏԻ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՎ ՇԻՐԱԿԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

ԲՈՒԼԻՆԳԻ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունիս, 2024

Լիբերալ քաղաքականության ինստիտուտ ՀԿ, 2024

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 5
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ 6
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8
Հարցվածների վերաբերյալ տվյալներ 8
Կրթական միջավայրը 10
Բուլինգի վերաբերյալ ընկալումները 20
Բուլինգի տարածվածությունը դպրոցում 23
Բուլինգի թիրախները դպրոցում 25
Բուլիները 30
Բուլինգի դրսևորման հարթակները 31
Բուլինգի դեպքերը 32
Բուլինգի կանխարգելմանն ուղղված վերապատրաստումներ մանկավարժների համար 36
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 38
ԲՈՒԼԻՆԳԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... **Error! Bookmark not defined.**
ՀԱՎԵԼՎԱԾ 1. 7-11 դասարանների աշակերտների հետ հարցազրույցի հարցաթերթ 41
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Դպրոցի տնօրենների հետ հարցազրույցի հարցաշար 47
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Դպրոցի ուսուցիչների հետ ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար 50
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ծնողների հետ ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար 53

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բուլինգն ագրեսիվ վարքի տեսակ է: Այն բնութագրվում է թշնամական մտադրություններով, իշխանության անհավասարակշռությամբ և որոշակի ժամանակահատվածում կրկնվող բնույթով: Այն ենթադրում է ուժի, հարկադրանքի, վիրավորական ծաղրի կամ սպառնալիքի կիրառում՝ վիրավորելու նպատակով, ագրեսիվ գերիշխանության կամ ահաբեկման նպատակով: Այս պահվածքը հաճախ կրկնվում է և դառնում սովորական որոշակի միջավայրում: Էական նախադրյալներից մեկը (բուլիների՝ ահաբեկողի կամ այլ անձանց կողմից) ֆիզիկական կամ սոցիալական ուժի անհավասարակշռության ընկալումն է: Բուլինգը կիրառվում է անհատի կամ խմբի դեմ՝ ֆիզիկական, սոցիալական և/կամ հոգեբանական վնաս պատճառելու նպատակով: Բուլինգից զոհերն իրենց զգում են թույլ և անօգնական:

Բուլինգը կարող է արտահայտվել հետապնդումների, հոգեբանական տեռորի, ծեծի, հեգնանքի, ծաղրի, բամբասանքների տարածման միջոցով: Այն կարող է տեղի ունենալ ցանկացած խմբում, բայց առավել վտանգավոր է դպրոցականների շրջանում:

Բուլինգը կարող է դրսևորվել ինչպես իրական կյանքում, այնպես էլ՝ առցանց: Կիբեր-բուլինգը տեղի է ունենում սոցիալական ցանցերի, SMS-ների, էլեկտրոնային փոստի կամ ցանկացած այլ առցանց հարթակների միջոցով:

Բուլինգի տեսակները դասակարգվում են ըստ տարբեր հիմքերի՝

- ֆիզիկական՝ հարվածել, թքել, հրմշտել, ուրիշի իրերին տիրանալ կամ ջարդել, միտումնավոր կամ կոպիտ շարժումներ կատարել, որոնք կարող են վնասել մարդու մարմինը կամ գույքը,
- բանավոր՝ ծաղրել, սպառնալ, պիտակավորել, անհարկի սեռական բնույթի մեկնաբանություններ անել,
- հոգեբանական կամ սոցիալական՝ դիտավորյալ խմբից վտարել, չընդունել, բամբասանքներ տարածել, վախեցնել, հասարակայնորեն վարկաբեկել,
- սեռական՝ հպումներ, հարձակումներ, բռնի գործողություններ և այլն,
- կիբեր՝ նվաստացումներ կամ կիբերսադրանք՝ տեքստային հաղորդագրություններ, սպառնալիքներ, անպարկեշտ նկարներ վիրավորական նյութեր ուղարկելը կամ տարածելը ինտերնետի կամ այլ տեխնոլոգիաների միջոցով:

Բուլինգն ըստ շատ մասնագետների ատելության խոսքի դրսևորումներից է իր դեռևս սաղմային, նախնական և նախատիպային տեսքով: Հատկապես այն դեպքերում, երբ խոսքը գնում է դպրոցական բուլինգի մասին, որի տարբեր տեսակները տարածված նաև Հայաստանի դպրոցներում:

UNICEF-ն ազդարարում է բավական վտանգավոր վիճակագրության վերաբերյալ՝ աշխարհում 13-ից 15 տարեկան աշակերտների կեսը՝ շուրջ 150 մլն. երեխաներ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության են ենթարկվել։

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Թվերի ետևում» զեկույցի համաձայն Հայաստանում 2012-2014 թվականների ընթացքում դպրոցում երեխաների նկատմամբ բուլինգի դեպքերի նվազում է նկատվել, իսկ ֆիզիկական բնույթի հարձակումներն ու ֆիզիկական բռնության կիրառմամբ վիճաբանությունների դեպքերի քանակը էականորեն չի փոփոխվել։ Ի լրումս, Հայաստանում աղջիկ-դպրոցականների 6.7%-ը և տղա-դպրոցականների 11.1%-ը տվյալների հավաքագրմանը նախորդող մեկ ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ բուլինգի զոհ են դարձել։ Հայաստանի դպրոցներում բուլինգի տարածվածության, դրսևորման ձևերի, տեսակների, աշակերտների, ծնողների և ուսուցիչների դրա հանդեպ վերաբերմունքի մասին ավելի արդի տվյալներ չկան։

Բուլինգի ո՞ր ձևերն են այսօր տարածված ՀՀ տարբեր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի հիմնական, ավագ և միջնակարգ դպրոցներում։ Որքանո՞վ են իրազեկված խնդրի լրջության վերաբերյալ ուսուցիչները, աշակերտները, դպրոցների տնօրենները, ծնողները, ինչպե՞ս են վերջիններս վերաբերվում բուլինգ երևույթին։ Ինչպե՞ս է բուլինգն ազդում աշակերտների կրթական արդյունքների վրա։ Նշված հարցերին պատասխանելու համար իրականացվել է սույն սոցիոլոգիական հետազոտությունը։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել ՀՀ դպրոցներում բուլինգի դրսևորման ձևերն ու դրա հանդեպ աշակերտների, ծնողների և ուսուցիչների վերաբերմունքը:

Հետազոտության նպատակը թիրախավորելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Պարզել և նկարագրել բուլինգի դրսևորման առավել տարածված ձևերը ՀՀ դպրոցներում (քաղաքային և գյուղական համայնքների պետական և մասնավոր դպրոցներում):
2. Պարզել բուլինգի հիմնական սուբյեկտներին և տուժողներին (քաղաքային և գյուղական համայնքների պետական և մասնավոր դպրոցներում):
3. Պարզել բուլինգի դրսևորումների մասին աշակերտների ընկալումները (քաղաքային և գյուղական համայնքների պետական և մասնավոր դպրոցներում):
4. Չափել բուլինգի վերաբերյալ ուսուցիչների իրազեկվածության մակարդակը (քաղաքային և գյուղական համայնքների պետական և մասնավոր դպրոցներում):
5. Պարզել բուլինգի տարբեր դրսևորումների նկատմամբ ուսուցիչների վերաբերմունքը (քաղաքային և գյուղական համայնքներում):
6. Չափել բուլինգի վերաբերյալ ծնողների իրազեկվածության մակարդակը (քաղաքային և գյուղական համայնքների պետական և մասնավոր դպրոցներում):
7. Պարզել բուլինգի տարբեր դրսևորումների նկատմամբ ծնողների վերաբերմունքը (քաղաքային և գյուղական համայնքների պետական և մասնավոր դպրոցներում):
8. Պարզել՝ բուլինգի դեմ պայքարի ինչպիսի միջոցառումներ են իրականացվում դպրոցներում (քաղաքային և գյուղական համայնքների պետական և մասնավոր դպրոցներում):
9. Պարզել բուլինգի զոհ դառնալու հաճախականությունը աշակերտների տարբեր սեռատարիքային և կարգավիճակային խմբերում:
10. Պարզել բուլինգի և կրթական արդյունքների միջև հարաբերակցությունը քաղաքային, գյուղական համայնքների պետական և մասնավոր դպրոցներում):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ

Հետազոտվող խնդրի բազմակողմանի ու խորն ուսումնասիրման համար իրականացվել է համալիր հետազոտություն՝ սոցիոլոգիական հետազոտության որակական և քանակական մեթոդների կիրառմամբ։

Հաշվի առնելով հետազոտվող հիմախնդրի զգայունությունը և դպրոցական համայնքի դժվար հասանելիությունը՝ ընտրվել են ինֆորմացիայի հավաքագրման հետևյալ մեթոդները.

1. Հարցազրույցներ ընտրված դպրոցների տնօրենների կամ փոխտնօրենների հետ,
2. Համացանցային հարցում (CAWI) միջին՝ 7-8 դասարանների (12-15 տարեկան) և ավագ դպրոցների 10-11 դասարանների (16-18 տարեկան) սովորողների հետ,
3. Ֆոկուս խմբային քննարկումներ աշակերտների ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հետ,
4. Ֆոկուս-խմբային քննարկումներ տարրական, միջին և ավագ դասարանների ուսուցիչների հետ։

Համացանցային հարցման արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունն ապահովելու համար իրականացվել է բազմաշերտ բույնային ընտրանք։

Ընտրանքի առաջին փուլում ընտրվել են մարզերն ու բնակավայրերը՝ Երևան, Գեղարքունիքի, Շիրակի և Արարատի մարզերի ընտրությունն ապահովել է աշխարհագրական ներկայացուցչականություն։ Գեղարքունիքի, Շիրակի և Արարատի մարզերում ընտրվել են մեկական քաղաքային և գյուղական բնակավայրեր։

Ընտրանքի երկրորդ փուլում ընտրվել են դպրոցները՝

1. Երևան քաղաքում ընտրվել են 3 դպրոցներ՝ 1 հիմական դպրոց, 1 ավագ դպրոց և 1 մասնավոր դպրոց,
2. Գյումրիում ընտրվել են 3 դպրոցներ՝ 1 հիմական դպրոց, 1 ավագ դպրոց և 1 մասնավոր դպրոց,
3. Գավառում ընտրվել են 2 դպրոցներ՝ 1 հիմական դպրոց և 1 ավագ դպրոց,
4. Արտաշատում ընտրվել են 2 դպրոցներ՝ 1 հիմական դպրոց և 1 ավագ դպրոց,
5. Յուրաքանչյուր գյուղական բնակավայրում ընտրվել է մեկական միջնակարգ դպրոց, ընդհանուր թվով՝ 3 միջնակարգ դպրոց։

Ընտրանքի երրորդ փուլում ընտրվել են դասարանները։ Յուրաքանչյուր հիմական և միջնակարգ դպրոցում ընտրվել է մեկական 7-րդ և 8-րդ դասարան։ Յուրաքանչյուր ավագ և միջնակարգ դպրոցում ընտրվել է մեկական 10-րդ և 11-րդ դասարան։

Ընտրանքի չորրորդ փուլում ընտրվել են հարցվողները։ Ընտրված յուրաքանչյուր դասարանում հարցվել է միջինում 10 սովորող։

Երևանում և յուրաքանչյուր մարզի դպրոցներում իրականացվել է 1 ֆոկուս-խմբային քննարկում դպրոցի տարբեր դասարանների դասղեկների կամ ուսուցիչների հետ և երկուական ֆոկուս-խմբային քննարկումներ աշակերտների այն ծնողների հետ, որոնք ունեն կամ ունեցել են դպրոցը հաճախող տարբեր տարիքի մեկից ավելի երեխաներ։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցվածների վերաբերյալ տվյալներ

Քանակական հետազոտության ընթացքում CAWI մեթոդով հարցվել է Երևանի, Արարատի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի 12-18 տարեկան **450 աշակերտ**, որոնցից 43.6%-ը արական սեռի ներկայացուցիչ են, իսկ 56.4%-ը՝ իգական: Հարցվածների բաշխվածությունն ըստ դասարանների ներկայացված է Աղյուսակ 1-ում: Հարցվածների 30.9%-ը սովորում է ավագ, 31.3%-ը՝ հիմնական, 23.6%-ը՝ միջնակարգ, իսկ 14.2%-ը՝ մասնավոր դպրոցում: Հարցվածների 22.2-ական տոկոսը Երևանից և Արարատի մարզից է, 23.1%-ը՝ Գեղարքունիքի, իսկ 32.4%-ը՝ Շիրակի մարզերից:

Աղյուսակ 1. Հարցվածների բաշխումն ըստ դասարանների:

Դասարանը	**Տոկոս**
7-րդ դասարան	**24.7%**
8-րդ դասարան	**26.9%**
10-րդ դասարան	**24.7%**
11-րդ դասարան	**23.8%**
Ընդամենը	**100.0%**

Հարցված աշակերտների գերակշռող մասը՝ 87.8%-ը, նշել է, որ դպրոցն ավարտելուց հետո պլանավորում է շարունակել ուսումը, որոնցից 66.6%-ը՝ բուհում, 14.9%-ը՝ միջին մասնագիտական հաստատությունում, 10.6%-ը՝ արտերկրում, 7.6%-ը դժվարացել է պատասխանել, իսկ մեկ աշակերտ նշել է՝ հոգևոր ճեմարանում: Ուսումը շարունակել պլանավորողների 26.6%-ը դժվարացել է նշել, թե ինչ մասնագիտությամբ կնախընտրեր սովորել, 15.7%-ը նշել են բժշկի, իսկ 12.4%-ը՝ ծրագրավորողի մասնագիտությունները: Այլ մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասնորեն ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Հարցվածների նախընտրելի մասնագիտությունը:

Մասնագիտությունը	**Տոկոս**	**Մասնագիտությունը**	**Տոկոս**
Դժ. պատ.	26.6%	Երգահան	0.5%
Բժիշկ	15.7%	Մոդելավորող	0.5%
Ծրագրավորող	12.4%	Շուկայագետ	0.5%
Իրավաբան	5.6%	Սպորտսմեն	0.5%
Բիզնես մենեջեր	3.5%	Քննիչ	0.5%
Դիզայներ	3.3%	Ավիաինժեներ	0.3%
Դերասան	3.0%	Ավտոմեխանիկ	0.3%
Մանկավարժ	2.0%	Արվեստաբան	0.3%
Հոգեբան	1.8%	Բլոգեր	0.3%

Դիվանագետ	1.5%	Լոգոպեդ	0.3%
Թարգմանիչ	1.5%	Լրագրող	0.3%
Լեզվաբան	1.5%	Կենսաբան	0.3%
Տնտեսագետ	1.5%	Կինոռեժիսոր	0.3%
Բուժքույր	1.3%	Կոսմետոլոգ	0.3%
Գրաֆիկ դիզայներ	1.3%	Մաթեմատիկոս	0.3%
Զբոսավար	1.3%	Մատնահարդար	0.3%
Ինժեներ	1.3%	Միկրոէլեկտրոնիկա	0.3%
Ֆինանսիստ	1.3%	Ոսկերիչ	0.3%
Հաշվապահ	1.0%	Ոստիկան	0.3%
Դեղագործ	0.8%	Պարուհի	0.3%
Զինվորական	0.8%	Ռադիոտեխնիկ	0.3%
Լուսանկարիչ	0.8%	Ռադիոֆիզիկա	0.3%
Խոհարար	0.8%	Տվյալագետ	0.3%
Ճարտարապետ	0.8%	Քահանա	0.3%
Նկարիչ	0.8%	Օդաչու	0.3%
Երաժիշտ	0.5%	**Ընդամենը**	**100.0%**

Հետազոտության արդյունքների համաձայն՝ հարցվածների 57.8%-ը «Ինչպե՞ս կգնահատեիք Ձեր և Ձեր ընտանիքի բարեկեցության մակարդակը» հարցին պատասխանել է, որ լիովին ապահովված են, իսկ 20.2%-ական տոկոսը նշել է ավելի շուտ ապահովված լինելու և միջին ապահովվածության մասին: Հատկանշական է, որ որևէ մեկը չի նշել «Ավելի շուտ ապահովված չենք» և «Բոլորովին ապահովված չենք» պատասխանի տարբերակները: Ըստ մարզային բաշխվածության՝ աղյուսակ 3-ից պարզ է դառնում, որ Երևանում սովորողներն ավելի բարձր են գնահատել իրենց ընտանիքի բարեկեցության մակարդակը, իսկ մարզերի աշակերտների պատասխանները վկայում են Գեղարքունիքի մարզում բարեկեցության համեմատաբար ցածր մակարդակի մասին:

Աղյուսակ 3. Հարցվածների ընտանիքի բարեկեցության մակարդակը՝ ըստ մարզերի:

	Երևան	**Շիրակ**	**Արարատ**	**Գեղարքունիք**	**Ընդամենը**
Լիովին ապահովված ենք	**68.0%**	61.6%	60.0%	**40.4%**	**57.8%**
Ավելի շուտ ապահովված ենք	20.0%	19.2%	24.0%	18.3%	**20.2%**
Միջին	12.0%	17.8%	13.0%	38.5%	**20.2%**
Ավելի շուտ ապահովված չենք	-	-	-	-	**-**
Բոլորովին ապահովված չենք	-	-	-	-	**-**
Դժվարանում եմ պատասխանել	-	1.4%	3.0%	2.9%	**1.8%**
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**

Որակական հետազոտության ընթացքում հարցվել են 13 դպրոցների տնօրեններ, ինչպես նաև իրականացվել են 26 ֆոկուս-խմբային քննարկումներ, որոնցից 13-ը՝ մանկավարժների, իսկ մյուս 13-ը՝ աշակերտների ծնողների հետ: Խմբային քննարկման մասնակիցների թիվը տատանվել է 7-10-ի շրջակայքում, ընդհանուր առմամբ կազմելով 201 մասնակից: Էթիկական նկատառումներից ելնելով դպրոցների և հարցվածների վերաբերյալ տվյալները ապաանձնավորվել են:

Կրթական միջավայրը

Հարցման արդյունքների համաձայն՝ աշակերտները դպրոցում համեմատաբար ավելի բարձր են գնահատել ծնող-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ապա աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները: Ինչ վերաբերում է դպրոցում կարգուկանոնին, ապա աշակերտների գնահատականները բավական ցածր են (*Տե՛ս Գծապատկեր 1.*):

Գծապատկեր 1. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցի՝



Ըստ հարցվածների սեռի, բնակության վայրի, դպրոցի տեսակի և դասարանի՝ հարցման արդյունքները փաստում են հետևյալը.

1. Աշակերտ-աշակերտ հարաբերությունները.
   - Ամենաբարձրն են գնահատվել Գեղարքունիքի մարզում՝ 76%, ամենացածրը՝ Երևանում՝ 67%,
   - Ամենաբարձրն են գնահատվել հիմնական դպրոցում՝ 77.3%, ամենացածրը՝ մասնավոր դպրոցներում՝ 53.1%,
   - Ամենաբարձրն են գնահատվել 8-րդ դասարանում՝ 78.5%, ամենացածրը 10-րդ դասարանում՝ 63.1%:
2. Աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները.
   - Բարձրն են գնահատվել իգական սեռի աշակերտների կողմից՝ 68.5%, ամենացածրը՝ արական՝ 65.8% հետ,
   - Ամենաբարձրն են գնահատվել Արարատի մարզում՝ 63%, ամենացածրը՝ Շիրակի մարզում՝ 54.8%,

- Ամենաբարձրն են գնահատվել մասնավոր դպրոցներում՝ 75%, ամենացածրը՝ հիմական դպրոցներում՝ 44%,
- Ամենաբարձրն են գնահատվել 11-րդ դասարանում՝ 72%, ամենացածրը՝ 10-րդ դասարանում՝ 62.2%:

3. Ծնող-ուսուցիչ հարաբերությունները.
   - Բարձրն են գնահատվել իգական սեռի աշակերտների կողմից՝ 75.6%, համեմատած արականի 70.9% հետ,
   - Ամենաբարձրն են գնահատվել Շիրակի մարզում 76.7%, ամենացածրը՝ Գեղարքունիքի մարզում՝ 71.2%,
   - Ամենաբարձրն են գնահատվել հիմական դպրոցում՝ 78%, ամենացածրը՝ մասնավոր դպրոցներում՝ 65.6%,
   - 8-րդ դասարանում 80.2%, համեմատած 10-րդ դասարանի 67.6% հետ:
4. Կարգուկանոնը.
   - Բարձր է գնահատվել արական սեռի աշակերտների կողմից՝ 61.2%, համեմատած իգականի 56.7% հետ,
   - Ամենաբարձրն են գնահատվել Շիրակի մարզում՝ 67.8%, ամենացածրը՝ Գեղարքունիքի մարզում՝ 51.9%,
   - Ամենաբարձրն են գնահատվել հիմական դպրոցներում՝ 67.1%, ամենացածրը՝ մասնավոր դպրոցներում՝ 53.1%,
   - Ամենաբարձրն են գնահատվել 8-րդ դասարանում՝ 66.1%, ամենացածրը՝ 10-րդ դասարանում՝ 42.3%:

Միևնույն ժամանակ հարցված աշակերտները ավելի բարձր են գնահատել ուսուցիչների առարկաների իմացությունը, քան մարդկային որակներն ու մանկավարժական հմտությունները (*Տե՛ս Գծապատկեր 2.*):

Գծապատկեր 2. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցի ուսուցիչների՝



Ըստ հարցվածների սեռի, բնակության վայրի, դպրոցի տեսակի և դասարանի՝ հարցման արդյունքները փաստում են հետևյալը.

1. Դպրոցի ուսուցիչների առարկայի/ների իմացությունը.

- Բարձր է գնահատվել իգական սեռի աշակերտների կողմից՝ 81.9%, համեմատած արականի 74.5% հետ,
- Ամենաբարձրն են գնահատվել Գեղարքունիքի մարզում՝ 87.5%, ամենացածրը՝ Երևանում՝ 77%,
- Ամենաբարձրն են գնահատվել ավագ դպրոցներում՝ 84.2%, ամենացածրը՝ մասնավոր դպրոցներում՝ 71.9%,
- Ամենաբարձրն են գնահատվել 8-րդ դասարանում՝ 84.3%, ամենացածրը՝ 7-րդ դասարանում՝ 68.5%։

2. Դպրոցի ուսուցիչների մանկավարժական հմտությունները.
   - Բարձր են գնահատվել արական սեռի աշակերտների կողմից՝ 73%, համեմատած իգականի՝ 71.7%,
   - Ամենաբարձրն են գնահատվել Գեղարքունիքի մարզում՝ 75%, ամենացածրը՝ Արարատի մարզում՝ 68%,
   - Ամենաբարձրն են գնահատվել ավագ դպրոցներում՝ 74.8%, ամենացածրը՝ մասնավոր դպրոցներում՝ 68.8%,
   - Ամենաբարձրն են գնահատվել 11-րդ դասարանում՝ 74.8%, ամենացածրը՝ 10-րդ դասարանում՝ 67.6%։
3. Դպրոցի ուսուցիչների մարդկային որակները.
   - Բարձր են գնահատվել իգական սեռի աշակերտների կողմից՝ 74%, համեմատած արականի 73% հետ,
   - Ամենաբարձրն են գնահատվել Գեղարքունիքի մարզում՝ 54.8%, ամենացածրը՝ Արարատի մարզում՝ 42%,
   - Ամենաբարձրն են գնահատվել միջնակարգ դպրոցներում՝ 82.1%, ամենացածրը՝ մասնավոր դպրոցներում՝ 56.3%,
   - Ամենաբարձրն են գնահատվել 11-րդ դասարանում՝ 80.4%, ամենացածրը՝ 10-րդ դասարանում՝ 64.9%։

Աշակերտների 39.3%-ի պնդմամբ վերջին մեկ ամսվա ընթացքում նրանք ոչ մի օր չեն բացակայել դպրոցից, մյուսները բացակայել են միջինում 2.6 օր։ Դպրոցից երբեք չբացակայող աշակերտների բաշխվածությունն ըստ հարցվածների սեռի, բնակության վայրի, դպրոցի տեսակի և դասարանի հետևյալն է.

- արական սեռի աշակերտների մոտ 41.3%, համեմատած իգականի 37.8% հետ,
- Շիրակի մարզում 43.2%, համեմատած Արարատի 28% հետ,
- հիմնական դպրոցում 49.6%, համեմատած ավագ դպրոցի 24.5% հետ,
- 7-րդ դասարանում 58.6%, համեմատած 11-րդ դասարանի 23.4% հետ։

Աշակերտների 66%-ը նշել է, որ բացակայությունները պայմանավորված են հիվանդություններով, 12.8%-ը՝ ժամանակ չունի, քանի որ ծանրաբեռնված է կրկնուսույցի մոտ պարապմունքներով։ 5.8-ական տոկոս պատճառաբանել է ընտանեկան

միջոցառումներով և դպրոց գնալու ցանկության բացակայությամբ: 2.4%-ը՝ ժամանակ չունի, քանի որ աշխատում է, 1.2%-ը՝ օլիմպիադային կամ մրցույթին մասնակցությամբ է պայմանավորել բացակայությունները, իսկ 2 հարցված նշել են, որ դպրոցում ճնշված են զգում (*Տե՛ս Գծապատկեր 3.*):

Գծապատկեր 3. Ինչո՞վ են հիմնականում պայմանավորված Ձեր բացակայությունները:



Անդրադառնալով աշակերտների առաջադիմությանը՝ հարկ է նշել, որ այն բավական բարձր է: Հարցվածների միայն 2.7%-ն է նշել, որ առաջադիմությունը 5 և ցածր միավոր է: Գերազանց (9 և 10 գնահատական) առաջադիմություն ունեն հարցվածների 44.4%-ը, իսկ 6-7-8 գնահատականներով են սովորում՝ 49.6%-ը (*Տե՛ս Գծապատկեր 4.1.*):

Գծապատկեր 4.1. Ինչպիսի՞ առաջադիմություն ունեք դպրոցում *(պատասխանների բաշխումն ըստ աշակերտների սեռի)*:



Ըստ հարցվածների սեռի, բնակության վայրի, դպրոցի տեսակի և դասարանի՝ հարցման արդյունքները փաստում են՝

- 9 և 10 գնահատականներով սովորում են իգական սեռի աշակերտները 55.5%, համեմատած արական սեռի աշակերտների 30.1% հետ և համապատասխանաբար 5 և ավելի ցածր գնահատականներով սովորում են արական աշակերտների 5.6%, իսկ աղջիկներից և ոչ ոք (*Տե՛ս Գծապատկեր 4.1.*),
- Գեղարքունիքի մարզում 9 և 10 գնահատականներով սովորում են աշակերտների 51%, Շիրակի մարզում՝ 48%, Երևանում՝ 42%, իսկ Արարատի մարզում՝ 35% (*Տե՛ս Գծապատկեր 4.2.*):

- Միջնակարգ դպրոցներում 9 և 10 գնահատականներով սովորում են աշակերտների 53.8%, ավագ դպրոցներում՝ 51.1%, մասնավոր դպրոցներում՝ 40.6%, իսկ հիմնական դպրոցներում՝ 32.6% (*Տե՛ս Գծապատկեր 4.3.*):
- 11-րդ դասարանում 9 և 10 գնահատականներով սովորում են աշակերտների 50.5%, 10-րդ դասարանում՝ 42.3%, 8-րդ դասարանում՝ 43.8%, իսկ 7-րդ դասարանում՝ 41.4% (*Տե՛ս Գծապատկեր 4.4.*):

Գծապատկեր 4.2. Ինչպիսի՞ առաջադիմություն ունեք դպրոցում *(պատասխանների բաշխումն ըստ մարզերի և Երևան քաղաքի)*:



Գծապատկեր 4.3. Ինչպիսի՞ առաջադիմություն ունեք դպրոցում *(պատասխանների բաշխումն ըստ դպրոցի տեսակի)*:



Գծապատկեր 4.4. Ինչպիսի՞ առաջադիմություն ունեք դպրոցում *(պատասխանների բաշխումն ըստ դասարանների)*:



Անցում կատարելով դպրոցին վերագրված գործառույթների իրականացմանը՝ հարկ է նշել,

որ աշակերտների մեծամասնությունը յուրաքանչյուր գործառույթի վերաբերյալ նշել է, որ դպրոցը լիովին կատարում է այդ գործառույթը կամ ավելի շուտ կատարում է: Այսպես՝ աշակերտներն ավելի հաճախ վկայում են, որ դպրոցը սովորեցնում է հարգել մարդու իրավունքները (55.1%), ձևավորում է երեխայի արժեհամակարգը (54.2%), թիմում փոխազդելու, համագործակցելու ունակությունը (50.4%) և այլն: Աշակերտների համեմատաբար բարձր տոկոսը նշել են, որ դպրոցն ընդհանրապես չի կատարում հետևյալ գործառույթները՝ կարծրատիպերից ձերբազատում (6.2%), երեխաների ֆիզիկական զարգացման ապահովում (5.1%), բոլոր երեխաների համար հավասար հնարավորությունների ապահովում (4.9%), երեխայի ուժեղ կողմերի բացահայտում (4.4%) *(Տե՛ս Գծապատկեր 5.)*:

Գծապատկեր 5. Որքանո՞վ է դպրոցն այսօր իրականացնում հետևյալ գործառույթները՝



Հետազոտության տվյալների վերլուծությունը վկայում է դպրոցի տեսակի և աշակերտների կարծիքով դպրոցի այս կամ այն գործառույթի կատարման միջև կոռելյացիայի մասին: Այսպես՝ հիմնական դպրոցների աշակերտներն ավելի հաճախ են նշում, որ իրենց դպրոցը լիովին կատարում է թվարկված գործառույթները, քան ավագ, միջնակարգ և մասնավոր դպրոցների աշակերտները: Ուշագրավ է, որ մասնագիտական կողմնորոշման

գործառույթը ավագ դպրոցների միայն 33.8% աշակերտների կարծիքով է կատարվում լիովին, որը էապես զիջում է մյուս դպրոցների ցուցանիշներին: Համանման կոռելյացիա նկատելի է հիմնականում Շիրակի մարզի աշակերտների, ինչպես նաև 7-րդ դասարանի հարցվածների պատասխաններում (*Տե՛ս Աղյուսակ 4.*):

Աղյուսակ 4. Որքանո՞վ է դպրոցն այսօր իրականացնում հետևյալ գործառույթները. *(«Լիովին» պատասխանի տարբերակի բաշխումն ըստ բնակավայրի, դպրոցի տեսականի և դասարանի)*

	Բնակավայր				Դպրոց				Դասարան			
	Երևան	Արարատ	Գեղարքունիք	Շիրակ	Ավագ	Հիմնական	Միջնակարգ	Մասնավոր	7-րդ	8-րդ	10-րդ	11-րդ
Ապահովում է որակյալ կրթություն	51.0%	39.0%	40.4%	52.7%	34.5%	66.0%	41.5%	37.5%	62.2%	57.9%	29.7%	34.6%
Ապահովում է հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար	52.0%	40.0%	49.0%	54.1%	38.1%	60.3%	45.3%	56.3%	57.7%	61.2%	37.8%	39.3%
Զևավորում է երեխայի արժեհամակարգը /հարգանք ընտանիքի, հայրենիքի, բնության, ընկերների նկատմամբ և այլ/	56.0%	39.0%	59.6%	59.6%	46.8%	67.4%	49.1%	50.0%	65.8%	63.6%	39.6%	46.7%
Նպաստում է ինքնուրույն անձի զարգացմանը	49.0%	38.0%	44.2%	45.2%	35.3%	62.4%	35.8%	37.5%	61.3%	51.2%	27.0%	36.4%
Զևավորում է թիմում փոխազդելու, համագործակցելու ունակություն	53.0%	43.0%	51.9%	52.7%	43.2%	64.5%	47.2%	40.6%	68.5%	54.5%	40.5%	37.4%

Կանխարգելում է երեխաների վարքային շեղումները	40.0%	30.0%	46.2%	47.3%	22.3%	62.4%	45.3%	31.3%	61.3%	52.1%	16.2%	35.5%
Ապահովում է երեխաների ֆիզիկական զարգացումը	47.0%	35.0%	43.3%	49.3%	34.5%	66.0%	37.7%	28.1%	64.0%	47.9%	27.0%	37.4%
Ապահովում է երեխաների մասնագիտական կողմնորոշումը	47.0%	41.0%	46.2%	53.4%	33.8%	63.1%	47.2%	43.8%	61.3%	59.5%	29.7%	38.3%
Բացահայտում է երեխայի ուժեղ և թույլ կողմերը	50.0%	45.0%	37.5%	52.7%	41.0%	61.7%	38.7%	40.6%	62.2%	47.9%	37.8%	39.3%
Սովորեցնում է հարգել մարդու իրավունքները	53.0%	46.0%	57.7%	61.0%	41.0%	78.7%	52.8%	37.5%	68.5%	70.2%	35.1%	44.9%
Օգնում է ձերբազատվել կարծրատիպերից	42.0%	28.0%	45.2%	46.6%	33.8%	58.9%	34.9%	28.1%	54.1%	49.6%	24.3%	35.5%

Ամփոփելով որակական հետազոտության արդյունքները՝ հարկ է նշել, որ ըստ հարցվածների դպրոցում աշակերտ-աշակերտ հարաբերությունները էական փոփոխությունների չեն ենթարկվել: Ինչպես ծնողները, այնպես էլ ուսուցիչները նշեցին, որ այդ հարաբերությունները մի փոքր մրցակցային են դարձել, սակայն ոչ թե ուսման, այլ հագուկապի և բրենդային հեռախոս ունենալու առումով, չնայած շատերը նշեցին, որ այդ միտումները տարբեր ժամանակներում զանազան եղանակներով դրսևորվել են: Հարցվածներն այդ մրցակցությունը մեծամասամբ բնորոշեցին հիմական դպրոցն ավարտող աշակերտների վարքագծում:

«Մեր ժամանակ հարաբերությունները այլ էին, մրցակցությունն արդքան շատ չէր, անգամ 5-6 տարի առաջ այդպես չէր հաստատ: Նախկինում եթե մրցակցություն լիներ, ապա ուսման առումով՝ ով ումից լավ կսովորեր, ով ումից լավ կգրեր, հիմա ցավոք սրտի գիտակցությունը այդպիսին չէ. հեռախոսի ֆիրման, կոշիկի, կամ հագուստի բրենդը, իսկ տղաների շրջանում՝ մեքենայի առկայությունը կամ մեսացած այլ բաներն են կարևորվում»: *(ուսուցիչ, Շիրակի մարզ)*

Դպրոցում աշակերտ-ուսուցիչ հարաբերությունների վերաբերյալ հարցվածները հիմականում դրական արձագանքեցին՝ շեշտելով փոխադարձ հարգանքը, ընկերական մոտեցումը, միմյանց ընդունելը: Սակայն որոշ դեպքերում մանկավարժների և ծնողների կարծիքները հակադիր են: Ուսուցիչների կարծիքով՝ նախկինում աշակերտ-ուսուցիչ հարաբերություններն ավելի լուրջ էին, պայմանավորված չէին վախի գործոնով, ուսուցչից գիտելիք ստանալու ակնկալիքն ու պահանջը հստակ էր: Ներկայումս՝ աշակերտների մեծ մասը դպրոցը դիտարկում է որպես **«պարտադիր հաճախման վայր», որտեղ պետք է կատարի «ներկա լինելու պարտականությունը»**:

Ծնողների կարծիքով՝ աշակերտ-ուսուցիչ հարաբերություններում առկա է անտարբերություն: Երբեմն ուսուցիչներն օգտագործում են իրենց դիրքը՝ ցածր գնահատելով, աշակերտին անտեսելով, հատկապես եթե աշակերտը ուղղախոս է:

«Իմ աղջիկը անարդարության կողքով անտարբեր անցնել չի կարող, եթե տեսնի ուսուցչի կողմից իր դասարանցու նկատմամբ անարդար վերաբերմունք, նա կպայքարի իր ընկերոջ համար: Բազմաթիվ դեպքերում դա ուսուցիչներին դուր չի եկել, և մի քանի անգամ սաստելուց հետո, սկսել են աղջկաս հետ «քեն քշել» ցածր գնահատելով: Սակայն դա իմ երեխային այլ մարդ չի դարձրել»: *(ծնող, Երևան)*

Ծնող-ուսուցիչ հարաբերությունների վերաբերյալ քննարկման մասնակիցները հիմականում դրական արտահայտվեցին՝ հաշվի առնելով իրենց փորձը, սակայն մանկավարժները ընդհանրական օրինակներով առանձնացրին որոշ հանգամանքներ, որոնց պարագայում այդ հարաբերությունները կարող են տուժել:

«Շատ կարևոր է ծնողի դաստիարակված լինելը, մի փոքր շատ իրավունքներ են տրված մեր ծնողներին: Եթե ծնողը կիրթ է, գրագետ է, հարգանքով է մոտենում ուսուցչին, դպրոցին, հարաբերությունը հեշտ է, իսկ եթե ծնողը անգրագետ է և միայն իր իրավունքների դրոշակն է թափահարում, հետևաբար այդ ծնողի հետ դժվար է հարաբերվել»: *(ուսուցիչ, Շիրակի մարզ)*

«Ես լսել եմ դեպքերի մասին, որ ծնողը անարգել է ուսուցչին: Տղամարդը ձեռք է բարձրացրել կին ուսուցչուհու վրա, իսկ պետությունը լռել է»: *(ուսուցիչ, Երևան)*

Անդրադառնալով դպրոցում կարգուկանոնին՝ հարցվածները գոհունակություն են հայտնել այդ առումով՝ հատկանշելով դրսևորվող խստությունը, կարգապահության պահանջը, դպրոցներում անվտանգության աշխատակիցների առկայությունը:

Քննարկելով սովորողների կրթական առաջադիմության և կրթության որակի հետ կապված փոփոխությունները՝ թե՛ մանկավարժները, թե՛ ծնողները, և թե՛ դպրոցի տնօրենները արձանագրեցին հետընթացի միտումներ՝ պայմանավորելով դրանք ինչպես աշակերտների ցածր մոտիվացիայով, թեմաների բարդությամբ, այնպես էլ համացանցի ընձեռած հնարավորություններով, որն իր հերթին ապահովում է չափից շատ տեղեկատվություն, իսկ արդյունքում այլևս հետաքրքրություն չի առաջացնում դասագրքին ինտեգրման հարցում:

«Գրքեր կարդալը երեխաների մոտ բացակայում է, քանի որ նրանք արդեն հեռախոսի հետ են կապված, հեռախոսով ցանկացած տեղեկություն կարող են ստանալ»: *(ուսուցիչ, Գեղարքունիքի մարզ)*

«Եթե աշակերտը մինչև գիշերը ժամը 12-ը, 1-ը հեռախոսով է խաղում, Դուք պատկերացնո՞ւմ եք նրա գլխուղեղի վիճակը՝ լրիվ արգելակված.այդ երեխան հաջորդ օրը ոչինչ ընկալել չի կարող»: *(ուսուցիչ, Շիրակի մարզ)*

«Երեխան ասում է՝ չեմ ուսում սովորելը բարդ է, հավես չունեմ, հեռախոսով եմ ուզում զբաղվել… Ծնողն էլ ձայն չի հանում, ձեռքն է տալիս հեռախոսը, որ ուղղակի խելոք իր ներկայությունը տան մեջ ապահովի»: *(ուսուցիչ, Արարատի մարզ)*

Բուլինգի վերաբերյալ ընկալումները

Ուսումնասիրելով բուլինգի վերաբերյալ հարցվածների ընկալումները՝ հարկ է նշել, որ չնայած աշակերտների մեծամասնությունը համաձայնել է ներկայացված բոլոր դատողությունների հետ, աշակերտների մեծամասնությունը բավական իրազեկված են բուլինգ երևույթի մասին և պատկերացում ունեն դրա դրսևորման տեսակների և գործադրման նպատակների մասին՝ 85.5%-ը բուլինգը բնորոշել է, որպես ուժի,

հարկադրանքի, վիրավորական ծաղրի կամ սպառնալիքի կիրառում (*Տե՛ս Գծապատկեր 6.*):

Գծապատկեր 6. Հետևյալ դատողություններից ո՞րն է առավելապես բնորոշում «բուլինգ» հասկացությունը:



Ըստ հարցվածների սեռի, բնակության վայրի, դպրոցի տեսակի և դասարանի՝ հարցման արդյունքները փաստում են հետևյալը.

1. «Բուլինգը ագրեսիվ վարքի տեսակ է» դատողության հետ՝
   - Լիովին համաձայն են արական սեռի աշակերտները՝ 28.6%, համեմատած իգականի 23.2% հետ,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են Շիրակի մարզում՝ 28.1%, իսկ Արարատի մարզում առավել հազվադեպ՝ 19%,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են հիմնական դպրոցներում՝ 31.2%, իսկ առավել հազվադեպ՝ միջնակարգ դպրոցներում՝ 20.8%,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են 8-րդ դասարանում՝ 63.6%, իսկ առավել հազվադեպ՝ 11-րդ դասարանում՝ 51.4%:
2. «Բուլինգը ուժի, հարկադրանքի, վիրավորական ծաղրի կամ սպառնալիքի կիրառումն է» դատողության հետ՝
   - Լիովին համաձայն են իգական սեռի աշակերտները՝ 59.1%, համեմատած արականի 55.6% հետ,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են Երևանում՝ 64%, իսկ Արարատի մարզում առավել հազվադեպ՝ 46% հետ,

- «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են մասնավոր դպրոցներում՝ 71.9%, իսկ ավագ դպրոցներում առավել հազվադեպ՝ 51.1%,
- «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են 8-րդ դասարանում՝ 84.3%, իսկ 10-րդ դասարանում առավել հազվադեպ՝ 68.5%։

3. «Բուլինգը կիրառվում է վիրավորելու, ագրեսիվ գերիշխանության կամ ահաբեկման նպատակով» դատողության հետ՝
   - Լիովին համաձայն են արական սեռի աշակերտները՝ 46.9%, համեմատած իգականի 43.7% հետ,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են Երևանում՝ 52%, իսկ Արարատի մարզում առավել հազվադեպ՝ 39%,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են հիմնական դպրոցներում՝ 53.2%, իսկ միջնակարգ դպրոցներում առավել հազվադեպ՝ 36.8%,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են 7-րդ դասարանում՝ 51.4%, իսկ 11-րդ դասարանում առավել հազվադեպ՝ 36.4%։
4. «Բուլինգը կիրառվում է անհատի կամ խմբի դեմ՝ ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական վնաս պատճառելու նպատակով» դատողության հետ՝
   - Լիովին համաձայն են իգական սեռի աշակերտները՝ 49.6%, համեմատած արականի 44.4% հետ,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են Երևանում՝ 53%, իսկ Գեղարքունիքի մարզում առավել հազվադեպ՝ 37.5%,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են ավագ և հիմնական դպրոցներում՝ 52.5%, իսկ միջնակարգ դպրոցում առավել հազվադեպ՝ 35.8%,
   - «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են 8-րդ դասարանում՝ 48.8%, իսկ 7-րդ դասարանում առավել հազվադեպ՝ 45.9%։
5. «Բուլինգն արտահայտվում է խտրականության, անարդար վերաբերմունքի և ճնշումների ձևով» դատողության հետ՝
   - Լիովին համաձայն են իգական սեռի աշակերտները՝ 48.8%, համեմատած արականի 43.9% հետ,

- «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են Երևանում՝ 52%, իսկ Գեղարքունիքի մարզում առավել հազվադեպ՝ 37.5%,
- «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են ավագ դպրոցներում՝ 50.4%, իսկ միջնակարգ դպրոցներում առավել հազվադեպ՝ 39.6%,
- «Լիովին համաձայն եմ» պատասխանի տարբերակն առավել հաճախ ընտրել են 7-րդ դասարանում՝ 52.3%, իսկ 11-րդ դասարանում առավել հազվադեպ՝ 43.9%:

Որակական հետազոտությունների արդյունքները վկայում են, որ «բուլինգ» երևույթի մասին բարձր է իրազեկվածության աստիճանը նաև ուսուցիչների և ծնողների շրջանում: Ուսուցիչների կարծիքով բուլինգի դրսևորման հիմքում հիմնականում ընկած է կարծրատիպային մտածելակերպը: Ուսուցիչների դիտարկմամբ՝ դպրոցահասակների շրջանում «ստանդարտներից» տարբերվողների նկատմամբ անհանդուրժողականությունը, ընդունված կանոններից «շեղումը»: Տարբերվող արտաքինը, ընտանիքի սոցիալական պայմանները նույնպես կարող են բուլինգի առիթ դառնալ:

«Ինձ համար բուլինգը հարկադրանք, պարտադրանք, ինչու չէ նաև ահաբեկում է, հատկապես՝ տարրական դպրոցում: Բուլինգի 4 տեսակի մասին էլ եմ կարդացել՝ կիբեր բուլինգ, ինձ թվում է՝ երևի սոցիալական մեդիայի շրջանակներում բուլինգն է, ֆիզիկական, հոգեբանական բուլինգ, սեռական, նաև վերբալ»: *(ուսուցիչ, Արարատի մարզ)*

Բուլինգի տարածվածությունը դպրոցում

Հարցված աշակերտների պատասխանները վկայում են դպրոցում բուլինգի տարածվածության մակարդակի մասին *(Տե՛ս Գծապատկեր 7.)*: Հարցվածների 42.4%-ը նշել է, որ դպրոցում երբեք բուլինգի ականատես չի լինում: Հանրագումարային գրեթե նույնքան աշակերտներ վկայում են դպրոցում տարբեր հաճախականությամբ բուլինգի ականատես լինելու մասին: 10.9%-ը նշել է, որ ամեն օր են բուլինգի ականատես լինում, 9.3%-ը՝ շաբաթական մեկ-երկու անգամ, 12.2%-ը՝ ամսական մեկ-երկու անգամ, իսկ 11.8%-ը՝ տարեկան մեկ-երկու անգամ հանդիպող բուլինգի դեպքերի մասին:

Գծապատկեր 7. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում բուլինգի ականատես լինում:



Ստացված ցուցանիշները տրոհելով ըստ հարցվածների սեռի, բնակության վայրի, դպրոցի տեսակի և դասարանի բնութագրիչների, գծապատկեր 8-ից պարզ է դառնում, որ ավելի հաճախ դպրոցում բուլինգի ականատես են լինում արական սեռի ներկայացուցիչները, Երևան քաղաքի աշակերտները, մասնավոր դպրոցի սաները և 8-րդ դասարանում սովորողները:

Գծապատկեր 8. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում բուլինգի ականատես լինում *(Դպրոցում երբևէ բուլինգի ականատես եղած աշակերտների պատասխանների բաշխումն ըստ հարցվածների սեռի, բնակության վայրի, դպրոցի տեսակի և դասարանի)*:



Տնօրենները և ուսուցիչները հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ նշեցին, որ իրենց դպրոցներում բուլինգի դեպքերը բացառված են, այնինչ որոշ ծնողներ արտահայտվել են մասնավոր դեպքերի մասին:

«Օրինակ՝ դեպքեր եղել են, որ ես զգացել եմ՝ ինչպես է ուսուցիչն ամեն ինչ անում, որ աշակերտին հալածի՝ վիրավորում է, անտեսում է, դասը հատուկ չի հարցնում»: *(ծնող, Երևան)*

«Գնահատականն ափսոսում են բարձր դնեն: Կարծես գնահատականը ցածր դնելով վրեժ են լուծում, կամ սիմպատիա չունի, դա ցույց է տալիս»: *(ծնող, Արարատի մարզ)*

Բուլինգի թիրախները դպրոցում

Աշակերտներին առաջարկվել էր նշել, թե որ խմբերի ներկայացուցիչ աշակերտներն են այլ աշակերտների կողմից բուլինգի ենթարկվում: Հարցման մասնակիցների 70%-ից ավելին պատասխանել է, որ այլ աշակերտների կողմից բուլինգի երբեք չեն ենթարկվում արցախցիները (82.9%), հարուստ ընտանիքների երեխաները (77.1%), հաշմանդամություն ունեցողները (76%), անապահով ընտանիքների երեխաները (73.3%), ցածր դասարանների աշակերտները (71.8%) և լավ սովորողները (70.4%):

Աշակերտների կողմից ավելի հաճախ են բուլինգի ենթարկվում գեր աշակերտները և տղաները, համապատասխանաբար, 16.9% և 14.7%: Նրանց հաջորդել են ակնոց կրողները (9.3%), աղջիկները (9.1%) և ցածր առաջադիմություն ունեցողները (6.9%): Մյուս խմբերի վերաբերյալ բուլինգի հաճախակի դեպքերի վերաբերյալ պատասխանները տատանվել են 2.2%-ից մինչև 5.6% սահմաններում (*Տե՛ս Գծապատկեր 9.*):

Գծապատկեր 9. Որքա՞ն հաճախ են Ձեր դպրոցում հետևյալ խմբերի ներկայացուցիչ աշակերտներն այլ **աշակերտների կողմից** բուլինգի ենթարկվում:



Ուսումնասիրելով վերոնշյալ խմբերի ներկայացուցիչ աշակերտների՝ արդեն իսկ ուսուցիչների կողմից բուլինգի ենթարկվելու դեպքերի հաճախականությունը՝ կարելի է ասել, որ աշակերտներն աշակերտների կողմից ավելի հաճախ են ենթարկվում բուլինգի, քան ուսուցիչների կողմից: Այնուամենայնիվ, հարցվածների 9.1%-ը նշել է, որ ուսուցիչների կողմից հաճախ բուլինգի են ենթարկվում ցածր առաջադիմություն ունեցողները, իսկ 8.9%՝ դարձյալ նշել են տղաներին: Նրանց հաջորդում են գեր աշակերտներն (3.6%) ու աղջիկները (3.3%): Մյուս խմբերի վերաբերյալ պատասխանները տատանվել են 0.9%-ից մինչև 2.0% սահմաններում (*Տե՛ս Գծապատկեր 10.*):

Գծապատկեր 10. Որքա՞ն հաճախ են Ձեր դպրոցում հետևյալ խմբերի ներկայացուցիչ աշակերտներն **ուսուցիչների կողմից** բուլինգի ենթարկվում:



Վերլուծելով Աղյուսակ 5-ի տվյալները, կարելի է եզրահանգել, որ դպրոցում աշակերտական տարբեր խմբերի ներկայացուցիչները բուլինգի են ենթարկվում ավելի հաճախ Արարատի մարզում, միջնակարգ դպրոցի աշակերտների և 7-րդ դասարանում սովորողների կողմից: Իսկ

Աղյուսակ 6-ի տվյալները վկայում են այն մասին, որ ուսուցիչների կողմից ավելի հաճախ են բուլինգի ենթարկվում այն աշակերտական խմբերի ներկայացուցիչները, որոնք ապրում են Երևանում, սովորում են մասնավոր դպրոցներում և հաճախում են 7-րդ ու 10-րդ դասարաններ:

Հարկ է նշել, որ, ըստ հարցվողների, աշակերտների նկատմամբ աշակերտների կողմից բուլինգի դեպքերն ավելի հաճախ են տեղի ունենում, քան ուսուցիչների կողմից *(Տե՛ս Գծապատկեր 11.)*:

Գծապատկեր 11. Որքա՞ն հաճախ են Ձեր դպրոցում հետևյալ խմբերի ներկայացուցիչ աշակերտներն **աշակերտների/ուսուցիչների կողմից** բուլինգի ենթարկվում:



Աղյուսակ 5. Որքա՞ն հաճախ են Ձեր դպրոցում հետևյալ խմբերի ներկայացուցիչ աշակերտներն այլ աշակերտների կողմից բուլինգի ենթարկվում: *(«Հաճախ» պատասխանի տարբերակի բաշխումն ըստ բնակավայրի, դպրոցի տեսակների և դասարանի)*

	Բնակավայր				Դպրոց				Դասարան			
	Երևան	Արարատ	Գեղարքունիք	Շիրակ	Ավագ	Հիմնական	Միջնակարգ	Մասնավոր	7-րդ	8-րդ	10-րդ	11-րդ
Տղաները	16.0%	**21.0%**	8.7%	13.7%	12.2%	15.6%	14.2%	**18.8%**	17.1%	10.7%	**18.9%**	12.1%
Աղջիկները	8.0%	7.0%	6.7%	**13.0%**	6.5%	8.5%	11.3%	**12.5%**	**15.3%**	5.0%	7.2%	9.3%
Հաշմանդամություն ունեցողները	**7.0%**	4.0%	6.7%	3.4%	4.3%	**8.5%**	4.7%	0.0%	**14.4%**	0.0%	0.9%	5.6%
Ակնոց կրողները	7.0%	**12.0%**	10.6%	8.2%	4.3%	10.6%	**16.0%**	6.3%	**13.5%**	9.9%	9.9%	3.7%
Գեր աշակերտները	16.0%	**20.0%**	17.3%	15.1%	16.5%	12.8%	**21.7%**	18.8%	**23.4%**	14.0%	17.1%	13.1%
Այլ ազգի ներկայացուցիչները	5.0%	**9.0%**	1.9%	6.2%	2.9%	4.3%	8.5%	**9.4%**	**9.9%**	3.3%	7.2%	1.9%
Արցախցիները	1.0%	**7.0%**	3.8%	0.0%	0.0%	4.3%	**5.7%**	0.0%	2.7%	**4.1%**	1.8%	1.9%
Անապահով ընտանիքների երեխաները	4.0%	**10.0%**	2.9%	5.5%	0.0%	7.8%	**9.4%**	6.3%	**10.8%**	4.1%	4.5%	2.8%
Հարուստ ընտանիքների երեխաները	2.0%	**4.0%**	2.9%	2.1%	0.0%	**4.3%**	3.8%	3.1%	**6.3%**	1.7%	2.7%	0.0%
Լավ սովորողները	6.0%	**9.0%**	4.8%	2.7%	4.3%	**7.1%**	3.8%	6.3%	3.6%	**7.4%**	5.4%	4.7%
Ցածր առաջադիմություն ունեցողները	5.0%	**10.0%**	5.8%	6.8%	4.3%	**8.5%**	**8.5%**	6.3%	**12.6%**	2.5%	7.2%	5.6%
Ցածր դասարանների աշակերտները	1.0%	**4.0%**	1.9%	2.1%	**2.9%**	2.1%	2.8%	0.0%	3.6%	0.8%	0.9%	**3.7%**

Աղյուսակ 6. Որքա՞ն հաճախ են Ձեր դպրոցում հետևյալ խմբերի ներկայացուցիչ աշակերտներն ուսուցիչների կողմից բուլինգի ենթարկվում: *(«Հաճախ» պատասխանի տարբերակի բաշխումն ըստ բնակավայրի, դպրոցի տեսակների և դասարանի)*

	Բնակավայր				Դպրոց				Դասարան			
	Երևան	Արարատ	Գեղարքունիք	Շիրակ	Ավագ	Հիմնական	Միջնակարգ	Մասնավոր	7-րդ	8-րդ	10-րդ	11-րդ
Տղաները	**10.0%**	9.0%	8.7%	8.2%	10.1%	7.8%	6.6%	**12.5%**	9.0%	5.8%	**12.6%**	8.4%
Աղջիկները	3.0%	2.0%	**6.7%**	2.1%	**7.9%**	2.8%	0.0%	0.0%	0.9%	2.5%	3.6%	**6.5%**
Հաշմանդամություն ունեցողները	**3.0%**	1.0%	0.0%	2.1%	0.0%	**5.0%**	0.0%	0.0%	**6.3%**	0.0%	0.0%	0.0%
Ակնոց կրողները	1.0%	1.0%	0.0%	**2.1%**	0.0%	1.4%	0.9%	**3.1%**	**1.8%**	0.8%	**1.8%**	0.0%
Գեր աշակերտները	4.0%	3.0%	**4.8%**	2.7%	**4.3%**	2.8%	3.8%	3.1%	3.6%	2.5%	1.8%	**6.5%**
Այլ ազգի ներկայացուցիչները	2.0%	0.0%	**3.8%**	1.4%	2.9%	0.7%	0.9%	**3.1%**	1.8%	0.0%	**5.4%**	0.0%
Արցախցիները	1.0%	**5.0%**	1.0%	0.0%	0.0%	2.1%	**3.8%**	0.0%	**2.7%**	1.7%	0.0%	1.9%
Անապահով ընտանիքների երեխաները	**3.0%**	1.0%	1.0%	2.7%	1.4%	1.4%	0.9%	**6.3%**	**3.6%**	0.8%	**3.6%**	0.0%
Հարուստ ընտանիքների երեխաները	1.0%	**2.0%**	1.0%	0.0%	0.0%	**2.8%**	0.0%	0.0%	**1.8%**	1.7%	0.0%	0.0%
Լավ սովորողները	0.0%	**3.0%**	1.0%	0.7%	0.0%	1.4%	**2.8%**	0.0%	0.9%	**3.3%**	0.0%	0.0%
Ցածր առաջադիմություն ունեցողները	**13.0%**	8.0%	7.7%	8.2%	12.2%	5.0%	2.8%	**21.9%**	9.0%	5.0%	**14.4%**	8.4%
Ցածր դասարանների աշակերտները	1.0%	**2.0%**	1.9%	0.7%	0.0%	0.0%	**3.8%**	3.1%	**1.8%**	1.7%	**1.8%**	0.0%

Բուլիները

Հետազոտության ընթացքում նպատակ էր դրվել նաև բացահայտելու բուլիների այլոց բուլինգի ենթարկելու շարժառիթները: Այն հարցին, թե ինչո՞ւ են ոմանք դիմում բուլինգի, հարցված աշակերտների գերակշռող մեծամասնությունը՝ 63.1%-ը, երևույթը պայմանավորել է ինքնահաստատման նպատակով: Մնացած պատճառներն էապես ավելի հազվադեպ են նշվել՝ 10.4%-ի կարծիքով դա իշխանություն և հեղինակություն ձեռքբերելու նպատակով է արվում, 8.9%-ը նշել է, որ բուլինգի ենթարկելը զվարճացնում է բուլիին: Քիչ թվով հարցված աշակերտներ բուլինգի ենթարկելը փոխպայմանավորել են մեծ և ուժեղ լինելու, ինչպես նաև բոլորի վարքագիծն ընդօրինակելու հետ, համապատասխանաբար, 2.9% և 1.6%: Հարցվածների 13.1%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին (*Տե՛ս Գծապատկեր 12.*):

Գծապատկեր 12. Ձեր կարծիքով, ինչո՞ւ են ոմանք դիմում բուլինգի:



Ե՛վ ուսուցիչները, և՛ ծնողները քննարկումների ընթացքում «բուլինգը» նկարագրեցին որպես ծաղր, ստորացուցիչ վերաբերմունք, որի միջոցով բուլին փորձում է իշխանություն ստանալ իր «զոհի» նկատմամբ՝ դրանով հանդերձ շրջապատին ցույց տալ իր «ուժեղ» լինելը:

Ուսուցիչների և ծնողների պատասխաններում երևաց բուլիների նկատմամբ կարծրատիպային վերաբերմունքը՝

«Բուլի է դառնում նրանք, ում ընտանիքներում քրեածին տարր է եղել, կամ նա, ով «գողական շայկի» հետ ինչ-որ ձևով առնչություն ունի»: *(ուսուցիչ, Շիրակի մարզ)*

«Բուլինգ են անում բաժանված ընտանիքների երեխաները: Նորմալ ընտանիքների երեխաները նման վերաբերմունք չեն դրսևորում: Բնավորության մեջ փսասվածքներ թողած երեխաները:» *(ուսուցիչ, Երևան)*

«Բուլիները դիմում են բուլինգի ինքնահաստատվելու համար» դատողությունը ավելի հաճախ նշել են իգական սեռի ներկայացուցիչները, Շիրակի մարզում բնակվողները, ավագ դպրոցի աշակերտները և 11-րդ դասարանում սովորողները (*Տե՛ս Գծապատկեր 13.*):

Գծապատկեր 13. «Բուլինները դիմում են բուլինգի ինքնահաստատվելու համար» պատասխանի տարբերակի բաշխումն ըստ հարցվածի սեռի, բնակավայրի, դպրոցի տեսակի և դասարանի:



Հարցին, թե որքա՞ն հաճախ եք Դուք բուլինգի ենթարկում մյուսներին, հարցված աշակերտների 74%-ը պատասխանել է «երբեք», իսկ 7.1%-ը դժվարացել է պատասխանել: Այնուամենայնիվ, հարցվածների 8.7% նշել է, որ տարեկան մեկ-երկու անգամ մյուսներին բուլինգի է ենթարկում, 3.6%-ը՝ ամսական մեկ-երկու անգամ, 4.4%-ը՝ շաբաթական մեկ-երկու անգամ, 2.2%՝ ամեն օր (*Տե՛ս Գծապատկեր 14.*):

Գծապատկեր 14. Որքա՞ն հաճախ եք Դուք բուլինգի ենթարկում մյուսներին:



Բուլինգի դրսևորման հարթակները

Հարցման ընթացքում անդրադառնալով բուլինգի դրսևորման հարթակներին՝ աշակերտներից հավաքագրված տվյալները փաստում են, որ դրանք բազմազան են և կախված իրենց տեսակից՝ ունեն դրսևորման տարբեր հաճախականություններ: Այսպես՝ բուլինգն ամենահաճախը դրսևորվում է դասասենյակում (46.3%), դպրոցի բակում (44.7%) և միջանցքում (41.4%): Դրանց հաջորդում են սոցիալական ցանցերն (40%) ու

զրուցարանները (33.3%), ինչը վկայում է կիբերբուլինգի ծավալների ավելացման մասին: Ավելի հազվադեպ, որպես բուլինգի դրսևորման վայր, հարցվածները նշել են սպորտդահլիճը (28.3%), զուգարանը (24.3%) և ճաշարանը (19.8%): *(Տե՛ս Գծապատկեր 15.)*:

Գծապատկեր 15. Բուլինգի դրսևորման վայրերն ու հարթակները:



Եթե վերոնշյալ վայրերն ու հարթակները դիտարկենք ըստ բուլինգի դրսևորման հաճախականության, ապա ստացվում է հետևյալ պատկերը *(Տե՛ս Գծապատկեր 16.)*:

Գծապատկեր 16. Որքա՞ն հաճախ են դրսևորվում բուլինգը հետևյալ վայրերում և հարթակներում:



Բուլինգի դեպքերը

Հարցման արդյունքների համաձայն՝ աշակերտների 12.2%-ի կյանքում (55 հարցվող) եղել են իրավիճակներ, երբ նրանք ենթարկվել են բուլինգի:

Նրանց 61.2%-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ են, 38.2%՝ արական: 34.5%-ը բնակվում է Շիրակի մարզում, 30.9%՝ Արարատի մարզում, 18.2%՝ Գեղարքունիքի մարզում, 16.4%՝ Երևանում: Բաշխումն ըստ դպրոցի տեսակի և դասարանի ներկայացված է Գծապատկեր 17-ում (*Տե՛ս Գծապատկեր 17.*):

Գծապատկեր 17. Եղե՞լ են արդյոք ձեր կյանքում իրավիճակներ, երբ Դուք եք ենթարկվել բուլինգի՝ ըստ հարցվածների սեռի, բնակավայրի, դպրոցի տեսակի և դասարանի



Բուլինգի երբևէ ենթարկված սովորողների գրեթե կեսը շաբաթական մեկ-երկու անգամ բուլինգի է ենթարկվում համադասարանցի տղաների կողմից: Այլ բուլիների կողմից բուլինգի դեպքերն ավելի հազվադեպ են նշվել *(Տե՛ս Աղյուսակ 7.)*:

Աղյուսակ 7. Եթե այո, ապա ո՞ւմ կողմից և որքա՞ն հաճախ:

	Ամեն օր	Շաբաթը մեկ-երկու անգամ	Ամիսը մեկ-երկու անգամ	Տարին մեկ-երկու անգամ	Երբեք	Դժ. պատ.	Ընդամենը
Համադասարանցի տղաների	9.1%	**45.5%**	1.8%	18.2%	21.8%	3.6%	100.0%
Համադասարանցի աղջիկների	7.3%	9.1%	7.3%	**14.5%**	50.9%	10.9%	100.0%
Այլ դասարանների տղաների	7.3%	**9.1%**	5.5%	5.5%	61.8%	10.9%	100.0%
Այլ դասարանների աղջիկների	**7.3%**	1.8%	1.8%	5.5%	**74.5%**	9.1%	100.0%
Դպրոցի ուսուցիչների	5.5%	7.3%	9.1%	**10.9%**	52.7%	14.5%	100.0%
Դպրոցի ադմինիստրացիայի	5.5%	5.5%	-	1.8%	**74.5%**	12.7%	100.0%
Դասարանցիների ծնողների	**5.5%**	-	1.8%	**5.5%**	**74.5%**	12.7%	100.0%
Իմ ծնողների և ընտանիքի այլ անդամների	**9.1%**	**9.1%**	7.3%	5.5%	63.6%	5.5%	100.0%

Գծապատկեր 18. Ինչպե՞ս էր արտահայտվել բուլինգը Ձեր նկատմամբ։



**Բազմակի պատասխանի հնարավորությամբ*

Անդրադառնալով բուլինգի արտահայտման ձևերին՝ բուլինգի ենթարկված հարցվածներն ամենահաճախը նշել են վիրավորական արտահայտությունների (25.7%), ծաղրի (21.6%) և մականունների, պիտակավորման մասին (10.8%)։ Հայհոյանքների մասին հիշատակվել է 7.4% դեպքերում, իսկ խմբից վտարման և ֆիզիկական ցավի պատճառման մասին՝ 6.1-ական տոկոս դեպքերում։ Ավելի քիչ դեպքերում հարցվածների նկատմամբ բուլինգը եղել է գումարի կորզման, նվաստացուցիչ հանձնարարությունների և սպառնալիքների տեսքով, համապատասխանաբար, 2.0%, 3.4% և 5.4%։ Հարցվածների 3.4%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին *(Տե՛ս Գծապատկեր 18)*։

Հարցված աշակերտներն իրենց նկատմամբ բուլինգի դեպքերի մասին հիմնականում պատմել են ընտանիքի անդամներին (34.6%) և իրենց ընկերներին (25.9%)։ Բուլինգի ենթարկված ամեն չորրորդ աշակերտ նախընտրել է լռել այդ մասին։ Դասղեկի և ուսուցիչների հետ կիսվել են 8.7% դեպքերում, իսկ հոգեբանի և ոստիկանի աջակցությանը դիմել է մեկական աշակերտ։ Հարցված աշակերտների 6.2%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին (*Տե՛ս Գծապատկեր 19.*)։

Գծապատկեր 19. Ո՞ւմ եք պատմել այդ մասին։



**Բազմակի պատասխանի հնարավորությամբ*

Բուլինգի դեպքերի մասին քննարկում եղավ նաև ֆոկուս-խմբերի ընթացքում։

«Թմբլիկ տղային բոլորը ծաղրում էին, ու իմ տղան ընկավ մեծ պատմության մեջ, որովհետև պաշտպան էր կանգնել: Պարզվեց, որ պաշտպանել էր իր ընկերոջը, ով բուլինգի էր ենթարկվել, եթե այդպես ձևակերպեմ, բարձր դասարանի տղաների կողմից, ովքեր որպես աղջիկ էին որակում այդ թմբլիկ տղային։» *(ծնող, Շիրակ)*

«Ուսուցիչը տղաներին դիմել է աղջիկների անունով և մեծ միջադեպ է տեղի ունեցել, բայց հարցը ծնողների միջամտության արդյունքում լուծվել է, ամեն ինչ հարթվել, անցել է։» *(ուսուցիչ, Երևան)*

«Մի երեխայից բոլոր դասարաններում ասում էին, որ զզվում են, բայց կանխեցինք դա։ Պարզվեց այդ երեխային տանը հիգիենայի առումով ուշադիր չէին, ինք էլ անտարբեր էր։ Երեխաները մոտը կանգնել, միջոցառման ժամանակ ձեռքը բռնել չէին ցանկանում։ Հետո անուններ էին կպցնում, մենք էլ հոգեբանի հետ մյուսների հետ աշխատեցինք, զրույցների միջոցով հասկացրեցինք, որ չի կարելի նման կերպ արտահայտվել։ Հետո մեր բուժաշխատակիցը զրուցել է այդ աշակերտի հետ, ներկայացրել հիգիենայի պահպանման կանոնները։» *(ուսուցիչ, Արարատ)*

«Աղջիկների մեջ է շատ լինում բուլինգի դեպքերը։ Աղջիկներն ավելի համարձակ են, ավելի ճարպիկ են. արտահայտվում են՝ դու նստիր, քո գործը չէ, ձայնդ կտրի…» *(ուսուցիչ, Երևան)*

Ծնողներից մեկը նկարագրեց ծնողի կողմից ուսուցչի նկատմամբ բուլինգի դեպք։

«Ծնող կա, ով սիրում է առաջնորդվել միայն երեխայի բարձր գնահատականներ ունենալու սկզբունքով, զանգում է դասղեկին, որ այս ինչ ուսուցիչը, ենթադրենք՝ երեխային ճնշել է, վատ է վարվել, կարմիր գրիչի փոխարեն կանաչ գրիչ թույլ չի տվել օգտագործել, նման բաներ։ Եվ դու փորձում ես հասկանալ երևույթը, հասկանում ես, որ ծնողն օգտագործել է այդ պահը, հաջորդ անգամ հաջորդ ուսուցչին է թիրախավորում։ Հասկանում ես, որ այդ ծնողը թիրախավորում է ուսուցչին, երբ հասկանում է, որ չունի աջակցություն դասղեկի կողմից՝ թիրախավորում է արդեն դասղեկին։» *(ծնող, Երևան)*

Ծնողները հիշատակեցին նաև ծնողների կողմից երեխաներին բուլինգի ենթարկելու դեպքեր։

«Դեպք է եղել՝ աշակերտը 2 է ստացել, ահավոր լացում էր, որ մայրը տանը կսպանի, որ 2 է ստացել, դա էլ չի կարող լինել։ Թվանշանի համար տանը երեխային ծեծում են։ Երկուս ստանալու համար երեխայի սիրտը պատռվում էր։ Այն որ 2 էր ստացել դա հեչ, բայց որ մաման տանը կսպանի դրա համար էր լացում։» *(ուսուցիչ, Գեղարքունիք)*

«Ունենք ծնողներ, ովքեր երեխաներին ստիպողաբար ուղղարկում են գումար վաստակելու.

բուլինգի են ենթարկում:» *(ուսուցիչ, Արարատ)*

Բուլինգի կանխարգելմանն ուղղված վերապատրաստումներ մանկավարժների համար

Դպրոցների տնօրենների հետ հարցազրույցների և ուսուցիչների հետ ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները ցույց են տալիս, որ մանկավարժական կազմը բավական ակտիվ ներգրավվում է կազմակերպվող վերապատրաստումներին, իսկ դպրոցի տնօրինությունը՝ խրախուսում է նրանց մասնակցությունը: Քննարկումներին մասնակցած ուսուցիչները նշել են, որ ներկայումս ՏՄԱԿ-ի կողմից, իսկ նախկինում տարբեր դոնոր կազմակերպությունների, ՔՀԿ-ների, որոշ դեպքերում նաև մարզպետարանների համապատասխան բաժինների կողմից իրականացված վերապատրաստումների շրջանակում ներառված են եղել բուլինգի վերաբերյալ թեմաներ, սակայն դրանք ավելի ընդհանրական բնույթ են կրել:

Շիրակի մարզի դպրոցների մի շարք ուսուցիչներ խիստ վերապահումով մոտեցան անվճար սկզբունքով կազմակերպվող վերապատրաստումներին՝ որակելով դրանք անարդյունավետ և համարելով ժամանակի վատնում:

«Վերապատրաստում անցել եմ բազմիցս, եթե ես վճարել եմ, վճարած վերապատրաստումից բավականություն եմ ստացել, արդյունք եմ տեսել: Եթե պետության կողմից կազմակերպված վերապատրաստումներ են, ապա անիմաստ ժամանակի կորուստ են: Երբեմն այնպիսի մարդիկ են նստում համակարգչի առաջ ու սկսում են իրենց կազմած սլայդները կմկմալով կարդալ… այդ վերապատրաստումը ինչի՞ համար է, եթե սլայդը պետք է միացնեն և կմկմալով կարդան… քավ լիցի, ուղղարկեք սլայդը, մենք կբացենք և վարժ կկարդանք, ի տարբերություն՝ իրենց»: *(Շիրակի մարզ, Միջնակարդ դպրոցի ուսուցիչ)*

Վերապատրաստումները զուտ ձևական բաներ են, ոչինչ չտվող, ժամանակի վատնում: Հիմնականում կազմակերպիչների հաշվետվության՝ նկարների համար *(Երևան, Ավագ դպրոցի ուսուցիչ)*

«Ամառվա ընթացքում, երբ մենք արձակուրդի մեջ էինք, կազմակերպվեց մեր հերթական վերապատրաստումը, երբ դժգոհեցինք, ծիծաղեցին, ասեցին՝ եթե բողոքում եք, մի եկեք, հետո կգնաք փող կմուծեք, այդ փողով նոր կգնաք վերապատրաստման: Շատերն էլ ուսուցիչ են, գումարի հարցն էր՝ լռեցին. եղավ բուլինգ»: *(Շիրակի մարզ, Հիմնական դպրոցի ուսուցիչ)*

Արարատի և Գեղաքունիքի մարզերի դպրոցների ուսուցիչները համեմատաբար ավելի քիչ են մասնակցել բուլինգի թեմայով վերապատրաստումներին, և հաշվի առնելով իրենց

աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ ոչ միշտ են նպատակահարմար գտնում և արդյունավետ համարում պարտադիր վերապատրաստումները:

«Վերապատրաստումներից հոգնել ենք արդեն, այնքան ենք գնացել, որ էլ ասելու չէ: Ախր ոնց կլինի՝ 2 տարի անդադար վերապատրաստումների ենք գնում»: *(Արարատի մարզ, Ավագ դպրոցի ուսուցիչ)*

«Մեր հիմական անելիքները թողած, որը իր ծավալի հետ մեկտեղ էնքան շատ թղթաբանություն է պարունակում, ընկել ենք այդ պարտադրվող վերապատրաստումների հետևից»: *(Գեղարքունիքի մարզ, Հիմական դպրոցի ուսուցիչ)*

«Երբ դու քանակով շատ վերապատրաստումների ես գնում ինչ-որ մի ժամանակահատվածում, արդեն հաջորդ առաջարկը հոգնեցնում է, հետևաբար, ինչ արդյունավետության մասին կարող է խոսք լինել, զուտ ապահովում ես ներկայություն»: *(Արարատի մարզ, Հիմական դպրոցի ուսուցիչ)*

Ընդհանուր առմամբ, ուսուցիչները կարևորում են վերապատրաստումն անցկացնող մասնագետի փորձառությունը, կոմպետենտությունը, հարցերին պատասխանելու պատրաստակամությունը, ինչպես նաև դասընթացի բովանդակային խորությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Հետազոտության ընթացքում CAWI մեթոդով հարցվել են Երևանի, Արարատի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի 13 դպրոցների (4 հիմնական դպրոց, 4՝ ավագ, 2՝ միջնակարգ, 2՝ մասնավոր) 12-18 տարեկան **450 աշակերտ**, որոնցից 43.6%-ը արական սեռի ներկայացուցիչ են, իսկ 56.4%-ը՝ իգական: Հարցվածների 30.9%-ը սովորում է ավագ, 31.3%-ը՝ հիմնական, 23.6%-ը՝ միջնակարգ, իսկ 14.2%-ը՝ մասնավոր դպրոցում:
- Որակական հետազոտության ընթացքում հարցվել են 13 դպրոցների տնօրեններ, ինչպես նաև իրականացվել են 26 ֆոկուս-խմբային քննարկումներ, որոնցից 13-ը՝ մանկավարժների, իսկ մյուս 13-ը՝ աշակերտների ծնողների հետ: Ընդհանուր առմամբ հարցվել են 201 հոգի:
- Աշակերտները դպրոցում համեմատաբար ավելի բարձր են գնահատել ծնող-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ապա աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները: Դպրոցում կարգուկանոնը համեմատաբար ցածր է:
- Աշակերտները ավելի բարձր են գնահատել ուսուցիչների առարկաների իմացությունը, քան մարդկային որակներն ու մանկավարժական հմտությունները:
- Համեմատաբար բարձր առաջադիմություն ունեն իգական սեռի աշակերտները, Գեղարքունիքի մարզի աշակերտները, միջնակարգ դպրոցների սովորողները և 11-րդ դասարանցիները:
- Դպրոցին վերագրված բոլոր գործառույթների վերաբերյալ աշակերտների մեծամասնությունը նշել է, որ դպրոցը լիովին կատարում է այդ գործառույթը կամ ավելի շուտ կատարում է: Այսպես՝ աշակերտներն ավելի հաճախ վկայում են, որ դպրոցը սովորեցնում է հարգել մարդու իրավունքները (55.1%), ձևավորում է երեխայի արժեհամակարգը (54.2%), թիմում փոխազդելու, համագործակցելու ունակությունը (50.4%) և այլն:
- Աշակերտների համեմատաբար բարձր տոկոսը նշել են, որ դպրոցն ընդհանրապես չի կատարում հետևյալ գործառույթները՝ կարծրատիպերից ձերբազատում (6.2%), երեխաների ֆիզիկական զարգացման ապահովում (5.1%), բոլոր երեխաների համար հավասար հնարավորությունների ապահովում (4.9%), երեխայի ուժեղ կողմերի բացահայտում (4.4%):
- Աշակերտների մեծամասնությունը բավական իրազեկված են բուլինգ երևույթի մասին և պատկերացում ունեն դրա դրսևորման տեսակների և գործադրման նպատակների մասին:
- Հարցված աշակերտների 42.4%-ը նշել է, որ դպրոցում երբեք բուլինգի ականատես չի լինում: 10.9%-ը նշել է, որ ամեն օր են բուլինգի ականատես լինում, 9.3%-ը՝ շաբաթական մեկ-երկու անգամ, 12.2%-ը՝ ամսական մեկ-երկու անգամ, իսկ 11.8%-ը՝ տարեկան մեկ-երկու անգամ հանդիպող բուլինգի դեպքերի մասին:

- Ավելի հաճախ դպրոցում բուլինգի ականատես են լինում արական սեռի ներկայացուցիչները, Երևան քաղաքի աշակերտները, մասնավոր դպրոցի սաները և 8-րդ դասարանում սովորողները:
- Աշակերտների կողմից բուլինգի հազվադեպ են ենթարկվում արցախցիները, հարուստ ընտանիքների երեխաները, հաշմանդամություն ունեցողները, անապահով ընտանիքների երեխաները, ցածր դասարանների աշակերտները և լավ սովորողները:
- Ավելի հաճախ են բուլինգի ենթարկվում գեր աշակերտները և տղաները: Նրանց հաջորդում են ակնոց կրողները, աղջիկները և ցածր առաջադիմություն ունեցողները:
- Աշակերտներն աշակերտների կողմից ավելի հաճախ են ենթարկվում բուլինգի, քան ուսուցիչների կողմից:
- Ուսուցիչների կողմից առավել հաճախ բուլինգի են ենթարկվում ցածր առաջադիմություն ունեցողները, տղաները, գեր աշակերտներն ու աղջիկները:
- Աշակերտների գերակշռող մեծամասնությունը համարում են, որ բուլիները բուլինգի են ենթարկում մյուսներին ինքնահաստատման նպատակով:
- Հարցված աշակերտների 74%-ը երբեք մյուսներին բուլինգի չի ենթարկում:
- Բուլինգն ամենահաճախը դրսևորվում է դասասենյակում, դպրոցի բակում և միջանցքում: Այս վայրերին հաջորդում են սոցիալական ցանցերն ու զրուցարանները, ինչը վկայում է կիբերբուլինգի ծավալների ավելացման մասին:
- Աշակերտների 12.2%-ի կյանքում (55 հարցվող) եղել են իրավիճակներ, երբ նրանք ենթարկվել են բուլինգի: Նրանց 61.2%-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ են, 38.2%՝ արական: 34.5%-ը բնակվում է Շիրակի մարզում, 30.9%՝ Արարատի մարզում, 18.2%՝ Գեղարքունիքի մարզում, 16.4%՝ Երևանում:
- Բուլինգի ենթարկված հարցվածներն ամենահաճախը ենթարկվել են բուլինգի հետևյալ դրսևորումների՝ վիրավորական արտահայտություններ (25.7%), ծաղր (21.6%) և մականուններ, պիտակավորում (10.8%): Հայհոյանքների մասին հիշատակվել է 7.4% դեպքերում, իսկ խմբից վտարման և ֆիզիկական ցավի պատճառման մասին՝ 6.1-ական տոկոս դեպքերում: Ավելի քիչ դեպքերում հարցվածների նկատմամբ բուլինգը եղել է գումարի կորզման, նվաստացուցիչ հանձնարարությունների և սպառնալիքների տեսքով, համապատասխանաբար, 2.0%, 3.4% և 5.4%:
- Հարցված աշակերտներն իրենց նկատմամբ բուլինգի դեպքերի մասին հիմնականում պատմել են ընտանիքի անդամներին և իրենց ընկերներին:
- Բուլինգի ենթարկված ամեն չորրորդ աշակերտ նախընտրել է լռել այդ մասին:
- Դպրոցների տնօրենները և ուսուցիչները պնդում են, որ նրանց դպրոցներում բուլինգի դեպքեր չկան, այնինչ նույն դպրոցների սովորողների ծնողները նշում են բուլինգի դեպքերի մասին:

- Ուսուցիչները գերհոգնած են պարտադիր վերապատրաստումներից և դժգոհ են դրանց որակից։ Յուրաքանչյուր նոր վերապատրաստում նյարդայնացնում է ուսուցիչներին։

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 7-11 դասարանների աշակերտների հետ հարցազրույցի հարցաթերթ

Հարգելի աշակերտ, «Էմպիրիկա» հետազոտական ընկերությունն ուսումնասիրում է ՀՀ հանրակրթական դպրոցներում բուլինգի հիմնախնդիրը: Հարցումն անանուն է, Ձեր պատասխաններն օգտագործվելու են ընդհանրացված ձևով: Հարցումը կտևի 7 րոպե: Նախապես շնորհակալ ենք Ձեր տրամադրած ժամանակի և անկեղծ պատասխանների համար: Հարցերի դեպքում կարող եք դիմել հետազոտության ղեկավարին՝ 0XXXXXXXX հեռախոսահամարով:

1. **Որտե՞ղ եք բնակվում:**
   1. Երևանում *(անցնել հարց 4-ին)*
   2. Արարատի մարզում 3. Շիրակի մարզում 4.Գեղարքունիքի մարզում
2. **Ո՞ր համայնքում եք բնակվում** _____
3. **Ո՞ր բնակավայրում եք բնակվում** _____ *(անցնել հարց 5-ին):*
4. **Երևանի ո՞ր վարչական շրջանում եք բնակվում:**
   1. Կենտրոն 2. Արաբկիր 3. Քանաքեռ-Զեյթուն 4. Նոր Նորք
   5. Նորք-Մարաշ 6. Ավան 7. Մալաթիա-Սեբաստիա 8. Աջափնյակ
   9. Էրեբունի 10. Նուբարաշեն 11. Շենգավիթ 12. Դավիթաշեն
5. **Ձեր սեռը՝** 1. Արական 2. Իգական
6. **Ձեր տարիքը** _____
7. **Ինչպե՞ս կգնահատեիք Ձեր և Ձեր ընտանիքի բարեկեցության մակարդակը:**
   1. Լիովին ապահովված ենք 4. Ավելի շուտ ապահովված չենք
   2. Ավելի շուտ ապահովված ենք 5. Բոլորովին ապահովված չենք
   3. Միջին 6. Դժվարանում եմ պատասխանել
8. **Ո՞ր դպրոցում եք սովորում:** _____
9. **Ո՞ր դասարանում եք սովորում:** 7. 8. 10. 11.
10. **Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում՝**

	Շատ վատ	Վատ	Նորմալ/ Բավարար	Լավ	Շատ լավ	Դժ. պատ.
1. Աշակերտ-աշակերտ հարաբերությունները	1	2	3	4	5	6
2. Աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները	1	2	3	4	5	6
3. Ծնող-ուսուցիչ հարաբերությունները	1	2	3	4	5	6
4. Կարգուկանոնը/ Դիսցիպլինան	1	2	3	4	5	6

11. **Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեիք դպրոցի ուսուցիչների՝**

	Շատ վատ	Վատ	Նորմալ/Բավարար	Լավ	Շատ լավ	Դժ. պատ.
1. Առարկայի/ների իմացությունը	1	2	3	4	5	6
2. Մանկավարժական հմտությունները	1	2	3	4	5	6

3. Մարդկային որակները	1	2	3	4	5	6

12. Քանի՞ օր եք Դուք բացակայել դպրոցից վերջին մեկ ամսվա ընթացքում _____ օր:

13. Ինչո՞վ են հիմնականում պայմանավորված Ձեր բացակայությունները: *(Նշել բոլոր վերաբերելի պատասխանները:)*

1. Հիվանդություններով
2. Ժամանակ չունեմ, ծանրաբեռնված եմ կրկնուսույցի մոտ պարապմունքներով
3. Ժամանակ չունեմ, զբաղվում եմ սպորտով
4. Ժամանակ չունեմ, աշխատում եմ
5. Ցանկություն չունեմ դպրոց գնալու
6. Ինձ դպրոցում ճնշված եմ զգում
7. Ընտանեկան միջոցառումներով
8. Օլիմպիադային կամ մրցույթին մասնակցությամբ
9. Այլ _____

14. Ինչպիսի՞ առաջադիմություն ունեք դպրոցում:

1. **10** գնահատականներով
2. **9** գնահատականներով
3. **8** գնահատականներով
4. **7-6** գնահատականներով
5. **5, 4, 3, 2, 1, 0** գնահատականներով
6. *Դժվարանում եմ պատասխանել*

15. Ձեր կարծիքով որքանո՞վ է դպրոցն այսօր իրականացնում հետևյալ գործառույթները:

	Ընդհանրապես չի կատարում	Ավելի շուտ չի կատարում	Ավելի շուտ կատարում է	Լիովին	*Դժ. պատ.*
1. Ապահովում է որակյալ կրթություն	1	2	3	4	99
2. Ապահովում է հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար	1	2	3	4	99
3. Ձևավորում է երեխայի արժեհամակարգը /հարգանք ընտանիքի, հայրենիքի, բնության, ընկերների նկատմամբ և այլ/	1	2	3	4	99
4. Նպաստում է ինքնուրույն անձի զարգացմանը	1	2	3	4	99
5. Ձևավորում է թիմում փոխազդելու, համագործակցելու ունակություն	1	2	3	4	99
6. Կանխարգելում է երեխաների վարքային շեղումները	1	2	3	4	99
7. Ապահովում է երեխաների ֆիզիկական զարգացումը	1	2	3	4	99
8. Ապահովում է երեխաների մասնագիտական կողմնորոշումը	1	2	3	4	99
9. Բացահայտում է երեխայի ուժեղ և թույլ կողմերը	1	2	3	4	99

10. Սովորեցնում է հարգել մարդու իրավունքները	1	2	3	4	99
11. Օգնում է ձերբազատվել կարծրատիպերից	1	2	3	4	99

16. Ասացեք, խնդրեմ, ի՞նչ է, ըստ Ձեզ «բուլինգը», փորձեք մի քանի բառով նկարագրել այն

_____

_____

17. Ասացեք, խնդրեմ, ստորև նշված դատողություններից ո՞րն է առավելապես բնորոշում «բուլինգ» հասկացությունը՝

Պատասխան	Ընդհանրապես չի բնորոշում	Ավելի շուտ չի բնորոշում	Ավելի շուտ բնորոշում է	Լիովին	*Դժ. պատ.*
1. Բուլինգը ագրեսիվ վարքի տեսակ է:	1	2	3	4	99
2. Բուլինգը ուժի, հարկադրանքի, վիրավորական ծաղրի կամ սպառնալիքի կիրառումն է:	1	2	3	4	99
3. Բուլինգը կիրառվում է վիրավորելու, ագրեսիվ գերիշխանության կամ ահաբեկման նպատակով:	1	2	3	4	99
4. Բուլինգը կիրառվում է անհատի կամ խմբի դեմ՝ ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական վնաս պատճառելու նպատակով:	1	2	3	4	99
5. Բուլինգն արտահայտվում է խտրականության, անարդար վերաբերմունքի և ճնշումների ձևով:	1	2	3	4	99

18. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում բուլինգի ականատես լինում:

1. Ամեն օր
2. Շաբաթը մեկ-երկու անգամ
3. Ամիսը մեկ-երկու անգամ
4. Տարին մեկ-երկու անգամ
5. Երբեք
6. Դժվարանում եմ պատասխանել

19. Որքա՞ն հաճախ են Ձեր դպրոցում հետևյալ խմբերի ներկայացուցիչ աշակերտներն <u>այլ աշակերտների կողմից</u> բուլինգի ենթարկվում:

	Երբեք	Հազվադեպ	Հաճախ	Դժ. պատ.
1. Տղաները	1	2	3	99
2. Աղջիկները	1	2	3	99
3. Հաշմանդամություն ունեցողները	1	2	3	99
4. Ակնոց կրողները	1	2	3	99
5. Գեր աշակերտները	1	2	3	99
6. Այլ ազգի ներկայացուցիչները	1	2	3	99

7. Արցախցիները	1	2	3	99
8. Անապահով ընտանիքների երեխաները	1	2	3	99
9. Հարուստ ընտանիքների երեխաները	1	2	3	99
10. Լավ սովորողները	1	2	3	99
11. Ցածր առաջադիմություն ունեցողները	1	2	3	99
12. Ցածր դասարանների աշակերտները	1	2	3	99

20. Որքա՞ն հաճախ են Ձեր դպրոցում հետևյալ խմբերի ներկայացուցիչ աշակերտներն <u>ուսուցիչների կողմից</u> բուլինգի ենթարկվում:

	Երբեք	Հազվադեպ	Հաճախ	Դժ. պատ.
1. Տղաները	1	2	3	99
2. Աղջիկները	1	2	3	99
3. Հաշմանդամություն ունեցողները	1	2	3	99
4. Ակնոց կրողները	1	2	3	99
5. Գեր աշակերտները	1	2	3	99
6. Այլ ազգի ներկայացուցիչները	1	2	3	99
7. Արցախցիները	1	2	3	99
8. Անապահով ընտանիքների երեխաները	1	2	3	99
9. Հարուստ ընտանիքների երեխաները	1	2	3	99
10. Լավ սովորողները	1	2	3	99
11. Ցածր առաջադիմություն ունեցողները	1	2	3	99
12. Ցածր դասարանների աշակերտները	1	2	3	99

21. Որքա՞ն հաճախ են դրսևորվում բուլինգը հետևյալ վայրերում և հարթակներում:

	Ամեն օր	Շաբաթը մեկ-երկու անգամ	Ամիսը մեկ-երկու անգամ	Տարին մեկ-երկու անգամ	Երբեք	Դժ. պատ.
1. Դասասենյակում	1	2	3	4	5	99
2. Ճաշարանում/Բուֆետում	1	2	3	4	5	99
3. Միջանցքում	1	2	3	4	5	99
4. Դպրոցի բակում	1	2	3	4	5	99
5. Զուգարանում	1	2	3	4	5	99
6. Սպորտ դահլիճում	1	2	3	4	5	99
7. Սոցիալական ցանցերում	1	2	3	4	5	99
8. Զրուցարաններում/Չաթերում	1	2	3	4	5	99

22. Եղե՞լ են արդյոք ձեր կյանքում իրավիճակներ, երբ Դուք եք ենթարկվել բուլինգի:

1. Այո 2. Ոչ *(անցնել հարց 27-ին)*

23. Եթե այո, ապա ո՞ւմ կողմից և որքա՞ն հաճախ:

	Ամեն օր	Շաբաթը մեկ-երկու անգամ	Ամիսը մեկ-երկու անգամ	Տարին մեկ-երկու անգամ	Երբեք	Դժ. պատ.

1. Համադասարանցի աղջիկների	1	2	3	4	5	99
2. Համադասարանցի տղաների	1	2	3	4	5	99
3. Այլ դասարանների աղջիկների	1	2	3	4	5	99
4. Այլ դասարանների տղաների	1	2	3	4	5	99
5. Դպրոցի ուսուցիչների	1	2	3	4	5	99
6. Դպրոցի ադմինիստրացիայի	1	2	3	4	5	99
7. Դասարանցիների ծնողների	1	2	3	4	5	99
8. Ձեր ծնողների և ընտանիքի այլ անդամների	1	2	3	4	5	99
9. Այլ /նշել/_____	1	2	3	4	5	99

24. Ինչպե՞ս էր արտահայտվել բուլինգը Ձեր նկատմամբ *(կարող եք նշել բոլոր վերաբերելի պատասխանները)*:

1. Վիրավորական արտահայտություններ Ձեր նկատմամբ
2. Վիրավորական արտահայտություններ Ձեր ընտանիքի նկատմամբ
3. Հայհոյանքներ
4. Ծաղր
5. Մականուններ, պիտակավորում
6. Գումարի կորզում
7. Նվաստացուցիչ հանձնարարություններ
8. Ֆիզիկական ցավի պատճառում
9. Սպառնալիքներ
10. Խմբից վտարում
11. Այլ _____

99. Դժվարանում եմ/Չեմ ուզում պատասխանել

25. Խնդրում եմ, նկարագրեք այդ իրավիճակը, երբ Ձեզ բուլինգի են ենթարկել:
_____
_____

26. Ո՞ւմ եք պատմել այդ մասին *(կարող եք նշել բոլոր վերաբերելի պատասխանները)*:

1. Ընկերներիս
2. Քրոջս/Եղբորս
3. Ծնողներիս
4. Ուսուցիչներին
5. Դասղեկին
6. Դպրոցի ադմինիստրացիայի ներկայացուցիչներին
7. Ավագ դասարանցիներին
8. Թաղամասի հեղինակություններին
9. Հոգեբանին
10. Ոստիկանությանը
11. Ոչ մեկին
12. Այլ _____

99. Դժվարանում եմ/Չեմ ուզում պատասխանել

27. Որքա՞ն հաճախ եք Դուք բուլինգի ենթարկում մյուսներին:

1. Ամեն օր
2. Շաբաթը մեկ-երկու անգամ
3. Ամիսը մեկ-երկու անգամ
4. Տարին մեկ-երկու անգամ
5. Երբեք
6. *Դժվարանում եմ պատասխանել*

28. Ձեր կարծիքով ինչո՞ւ են ոմանք դիմում բուլինգի:

1. Քանի որ մեծ են և ուժեղ
2. Այդպես են զվարճանում
3. Իշխանություն և հեղինակություն ունենալու համար
4. Ինքնահաստատվելու համար
5. Քանի որ բոլորն են այդպես անում
6. Չգիտեմ

29. Պլանավորո՞ւմ եք արդյոք շարունակել կրթությունը դպրոցն ավարտելուց հետո:

1. Այո 2. Ոչ *(ավարտել հարցազրույցը)* 3. Դեռ չեմ որոշել *(ավարտել հարցազրույցը)*

30. Եթե այո, ապա որտե՞ղ:

1. Բուհում
2. Միջին մասնագիտական հաստատությունում
3. Այլ _____
4. Արտերկրում

31. Ի՞նչ մասնագիտությամբ: *(նշել)*_____

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Դպրոցի տնօրենների հետ հարցազրույցի հարցաշար

Հարգելի տնօրեն, «Էմպիրիկա» ընկերությունն ուսումնասիրում է ՀՀ հանրակրթական դպրոցներում բուլինգի հիմախնդիրը: Հետազոտության արդյունքում կմշակվեն առաջարկներ դպրոցներում բուլինգի կանխարգելման, սովորողների և ուսուցիչների բուլինգից պաշտպանության, արձագանքման և ուղղորդման մեխանիզմների մշակման ուղղությամբ: Հարցազրույցն անանուն է, Ձեր պատասխաններն օգտագործվելու են ընդհանրացված ձևով: Հարցազրույցը կտևի շուրջ 20 րոպե: Խնդրում ենք Ձեզ թույլատրել մեզ ձայնագրել հարցազրույցը, որպեսզի կարողանանք Ձեր մտքերն ու կարծիքը հստակ արտացոլել հաշվետվության մեջ՝ առանց աղավաղումների:

Կանխավ շնորհակալ ենք Ձեր տրամադրած ժամանակի և անկեղծ պատասխանների համար: Հարցերի դեպքում կարող եք դիմել հետազոտության ղեկավարին՝ *0XXXXXXXX* հեռախոսահամարով:

Ծանոթացում՝

1. Խնդրում ենք Ձեզ ներկայանալ՝ նշելով Ձեր անունը, տարիքը, դպրոցում աշխատելու փորձառությունը, դասավանդվող առարկաները:
2. Պատմեք դպրոցի մասին՝ աշակերտների թիվ, ուսուցիչների թիվ, շենքային պայմանները, օլիմպիադաներին մասնակցությունը:

Ներածական հարցեր՝

3. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում աշակերտ-աշակերտ հարաբերությունները: Ինչպե՞ս են դրանք փոփոխվել տարիների ընթացքում:
4. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները: Ինչպե՞ս են դրանք փոփոխվել տարիների ընթացքում:
5. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում ծնող-ուսուցիչ հարաբերությունները: Ինչպե՞ս են դրանք փոփոխվել տարիների ընթացքում:
6. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում կարգուկանոնը: Ի՞նչ փոփոխություններ եք նկատում տարիների ընթացքում:
7. Ինչպե՞ս է փոխվել սովորողների կրթական առաջադիմությունը:
8. Ի՞նչ փոփոխություններ եք նկատում կրթության որակի հետ կապված:

Բուլինգ՝

9. Ասացեք, խնդրեմ, ի՞նչ է, ըստ Ձեզ «բուլինգը», փորձեք մի քանի բառով նկարագրել այն:
10. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում աշակերտների միջև բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
11. Ո՞վ է, որպես կանոն, հանդես գալիս բուլիի դերում: Ինչո՞ւ:
12. Իսկ ովքե՞ր են առավել հաճախ բուլինգի ենթարկվում *(աղջիկները, տղաները, փոքրերը, հաշմանդամություն ունեցողները, ակնոց կրողները, գեր աշակերտները, այլ ազգի ներկայացուցիչները, արցախցիները, անապահով ընտանիքների*

երեխաները, հարուստ ընտանիքների երեխաները, լավ սովորողները, ցածր առաջադիմություն ունեցողները, ցածր դասարանների աշակերտները, այլ):

13. Ի՞նչ կարող է անել ուսուցիչը/դպրոցը նման վարքը կանխելու համար:
14. Իսկ ի՞նչ եք անում բուլինգի դեպքում: Պատմեք մի քանի դեպք:
15. Որքա՞ն հաճախ եք Դուք ծնողների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
16. Որքա՞ն հաճախ եք Դուք ծնողների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
17. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
18. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում աշակերտների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:

Վերապատրաստումներ՝

19. Անցե՞լ են արդյոք ուսուցիչները վերապատրաստումներ բուլինգի կանխարգելման թեմայով:
20. Եթե այո, ապա ինչպե՞ս կգնահատեիք դրանց արդյունավետությունը: Գնահատեք 0-5 սանդղակով, որտեղ 0 - *«ընդհանրապես արդյունավետ չէ»*, 5 - *«շատ արդյունավետ է»*: Հիմնավորեք Ձեր պատասխանը: Ի՞նչն այլ կերպ կանեիք:
21. Եթե ոչ, ապա կա՞ արդյոք նման վերապատրաստումների կարիք, Ձեր կարծիքով: Ի՞նչ բովանդակություն պետք է դրանք ունենան:

Առաջարկություններ՝

22. Ի՞նչ է պետք անել Ձեր կարծիքով աշակերտների միջև բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
23. Ի՞նչ է պետք անել ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
24. Ի՞նչ է պետք անել աշակերտների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
25. Ի՞նչ է պետք անել ծնողների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
26. Ի՞նչ է պետք անել ծնողների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:

27. Կցանկանա՞ք ավելացնել որևէ բան։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Դպրոցի ուսուցիչների հետ ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար

Հարգելի ուսուցիչներ, «Էմպիրիկա» ընկերությունն ուսումնասիրում է ՀՀ հանրակրթական դպրոցներում բուլինգի հիմնախնդիրը: Հետազոտության արդյունքում կմշակվեն առաջարկներ դպրոցներում բուլինգի կանխարգելման, սովորողների և ուսուցիչների բուլինգից պաշտպանության, արձագանքման և ուղղորդման մեխանիզմների մշակման ուղղությամբ: Հետազոտությունն անանուն է, Ձեր պատասխաններն օգտագործվելու են ընդհանրացված ձևով: Խնդրում ենք Ձեզ հարգել ֆոկուս-խմբի այլ մասնակիցների պատասխանների գաղտնիության սկզբունքը և այս քննարկման ժամանակ հնչած մտքերն ու փաստերը չքննարկել այլ մարդկանց հետ: Որպեսզի քննարկումն արդյունավետ լինի, խնդրում ենք Ձեզ հարգել մյուսների կարծիքը, խոսել առանց մյուսներին ընդհատելու և չշեղվել քննարկվող հարցերից: Քննարկումը կտևի շուրջ 40 րոպե: Խնդրում ենք Ձեզ թույլատրել մեզ ձայնագրել այս քննարկումը, որպեսզի կարողանանք Ձեր մտքերն ու կարծիքը հստակ արտացոլել հաշվետվության մեջ՝ առանց աղավաղումների:

Կանխավ շնորհակալ ենք Ձեր տրամադրած ժամանակի և անկեղծ պատասխանների համար: Հարցերի դեպքում կարող եք դիմել հետազոտության ղեկավարին՝ *0XXXXXXXX* հեռախոսահամարով:

Ծանոթացում՝

1. Խնդրում ենք Ձեզ ներկայանալ՝ նշելով Ձեր անունը, տարիքը, դպրոցում աշխատելու փորձառությունը, դասավանդվող առարկաները:

Ներածական հարցեր՝

2. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում աշակերտ-աշակերտ հարաբերությունները: Ինչպե՞ս են դրանք փոփոխվել տարիների ընթացքում:
3. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները: Ինչպե՞ս են դրանք փոփոխվել տարիների ընթացքում:
4. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում ծնող-ուսուցիչ հարաբերությունները: Ինչպե՞ս են դրանք փոփոխվել տարիների ընթացքում:
5. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում կարգուկանոնը: Ի՞նչ փոփոխություններ եք նկատում տարիների ընթացքում:
6. Ինչպե՞ս է փոխվել սովորողների կրթական առաջադիմությունը:
7. Ի՞նչ փոփոխություններ եք նկատում կրթության որակի հետ կապված:

Բուլինգ՝

8. Ասացեք, խնդրեմ, ի՞նչ է, ըստ Ձեզ «բուլինգը», փորձեք մի քանի բառով նկարագրել այն:
9. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում աշակերտների միջև բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
10. Ո՞վ է, որպես կանոն, հանդես գալիս բուլիի դերում: Ինչո՞ւ:

11. Իսկ ովքե՞ր են առավել հաճախ բուլինգի ենթարկվում *(աղջիկները, տղաները, փոքրերը, հաշմանդամություն ունեցողները, ակնոց կրողները, գեր աշակերտները, այլ ազգի ներկայացուցիչները, արցախցիները, անապահով ընտանիքների երեխաները, հարուստ ընտանիքների երեխաները, լավ սովորողները, ցածր առաջադիմություն ունեցողները, ցածր դասարանների աշակերտները, այլ)*:
12. Ի՞նչ կարող է անել ուսուցիչը/դպրոցը նման վարքը կանխելու համար:
13. Իսկ ի՞նչ եք անում բուլինգի դեպքում: Պատմեք մի քանի դեպք:
14. Որքա՞ն հաճախ եք Դուք ծնողների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
15. Որքա՞ն հաճախ եք Դուք ծնողների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
16. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
17. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում աշակերտների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգի ականատես լինում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:

Վերապատրաստումներ՝

18. Անցե՞լ եք Դուք արդյոք վերապատրաստումներ բուլինգի կանխարգելման թեմայով:
19. Եթե այո, ապա ինչպե՞ս կգնահատեիք դրանց արդյունավետությունը: Գնահատեք 0-5 սանդղակով, որտեղ 0 - *«ընդհանրապես արդյունավետ չէ»*, 5 - *«շատ արդյունավետ է»*: Հիմնավորեք Ձեր պատասխանը: Ի՞նչն այլ կերպ կանեիք:
20. Եթե ոչ, ապա կա՞ արդյոք նման վերապատրաստումների կարիք, Ձեր կարծիքով: Ի՞նչ բովանդակություն պետք է դրանք ունենան:

Առաջարկություններ՝

21. Ի՞նչ է պետք անել Ձեր կարծիքով աշակերտների միջև բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
22. Ի՞նչ է պետք անել ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
23. Ի՞նչ է պետք անել աշակերտների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
24. Ի՞նչ է պետք անել ծնողների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
25. Ի՞նչ է պետք անել ծնողների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգը կանխելու

համար։ Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել։

26. Կցանկանա՞ք ավելացնել որևէ բան։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ծնողների հետ ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար

Հարգելի ծնողներ, «Էմպիրիկա» ընկերությունն ուսումնասիրում է ՀՀ հանրակրթական դպրոցներում բուլինգի հիմնախնդիրը: Հետազոտության արդյունքում կմշակվեն առաջարկներ դպրոցներում բուլինգի կանխարգելման, սովորողների և ուսուցիչների բուլինգից պաշտպանության, արձագանքման և ուղղորդման մեխանիզմների մշակման ուղղությամբ: Հետազոտությունն անանուն է, Ձեր պատասխաններն օգտագործվելու են ընդհանրացված ձևով: Խնդրում ենք Ձեզ հարգել ֆոկուս-խմբի այլ մասնակիցների պատասխանների գաղտնիության սկզբունքը և այս քննարկման ժամանակ հնչած մտքերն ու փաստերը չքննարկել այլ մարդկանց հետ: Որպեսզի քննարկումն արդյունավետ լինի, խնդրում ենք Ձեզ հարգել մյուսների կարծիքը, խոսել առանց մյուսներին ընդհատելու և չշեղվել քննարկվող հարցերից: Քննարկումը կտևի շուրջ 40 րոպե: Խնդրում ենք Ձեզ թույլատրել մեզ ձայնագրել այս քննարկումը, որպեսզի կարողանանք Ձեր մտքերն ու կարծիքը հստակ արտացոլել հաշվետվության մեջ՝ առանց աղավաղումների:

Կանխավ շնորհակալ ենք Ձեր տրամադրած ժամանակի և անկեղծ պատասխանների համար: Հարցերի դեպքում կարող եք դիմել հետազոտության ղեկավարին՝ *0XXXXXXXX* հեռախոսահամար:

Ծանոթացում՝

1. Խնդրում ենք Ձեզ ներկայանալ՝ նշելով Ձեր անունը, տարիքը, Ձեր երեխաների թիվը, տարիքը, ո՞ր դասարան/ներ/ում են սովորում, ի՞նչ առաջադիմություն ունեն:

Ներածական հարցեր՝

2. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում աշակերտ-աշակերտ հարաբերությունները: Ինչպե՞ս են դրանք ազդում երեխայի վարքի և առաջադիմության վրա:
3. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները: Ինչպե՞ս են դրանք ազդում երեխայի վարքի և առաջադիմության վրա:
4. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում ծնող-ուսուցիչ հարաբերությունները: Ինչպե՞ս են դրանք ազդում երեխայի վարքի և առաջադիմության վրա:
5. Ինչպե՞ս կգնահատեիք դպրոցում կարգուկանոնը: Ի՞նչ փոփոխություններ եք նկատում տարիների ընթացքում:
6. Ինչպե՞ս կգնահատեիք կրթության որակը: Ի՞նչ փոփոխություններ եք նկատում տարիների ընթացքում:

Բուլինգ՝

7. Ասացեք, խնդրեմ, ի՞նչ է, ըստ Ձեզ «բուլինգը», փորձեք մի քանի բառով նկարագրել այն:
8. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում աշակերտների միջև բուլինգի դեպքերի մասին լսում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
9. Ո՞վ է, որպես կանոն, հանդես գալիս բուլիի դերում: Ինչո՞ւ:

10. Իսկ ովքե՞ր են առավել հաճախ բուլինգի ենթարկվում *(աղջիկները, տղաները, փոքրերը, հաշմանդամություն ունեցողները, ակնոց կրողները, գեր աշակերտները, այլ ազգի ներկայացուցիչները, արցախցիները, անապահով ընտանիքների երեխաները, հարուստ ընտանիքների երեխաները, լավ սովորողները, ցածր առաջադիմություն ունեցողները, ցածր դասարանների աշակերտները, այլ)*:
11. Ի՞նչ կարող է անել ուսուցիչը/դպրոցը/ծնողը նման վարքը կանխելու համար:
12. Իսկ ի՞նչ եք Դուք արել բուլինգի դեպքում: Պատմեք մի քանի դեպք:
13. Որքա՞ն հաճախ եք Դուք ուսուցիչների նկատմամբ բուլինգի դեպքերի մասին լսում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
14. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգի դեպքերի մասին լսում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:
15. Որքա՞ն հաճախ եք Դուք դպրոցում աշակերտների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգի դեպքերի մասին լսում: Պատմեք մի քանի դեպքերի մասին: Ինչո՞վ են դրանք պայմանավորված:

Առաջարկություններ՝

16. Ի՞նչ է պետք անել Ձեր կարծիքով աշակերտների միջև բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
17. Ի՞նչ է պետք անել ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
18. Ի՞նչ է պետք անել աշակերտների կողմից ուսուցիչների նկատմամբ բուլինգը կանխելու համար: Իսկ ի՞նչ է պետք անել, ո՞ւմ դիմել, եթե բուլինգն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:
19. Ի՞նչ կարող է անել ծնողը բուլինգը կանխելու համար:
20. Կցանկանա՞ք ավելացնել որևէ բան:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ